

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Հայաստանի Իշխանութիւններու Տարօրինակ Քայլերը

Այս օրերուն երբ Հայաստան կը պատրաստուի նշելու իր անկախութեան 25-ամեակը, երկիրը կը յայտնուի բաւականին մտահոգիչ վիճակի մը մէջ: Տնտեսական, քաղաքական ու յատկապէս արտագաղթի հիմնահարցերը օրէ օր կ'ամալացնեն մեր հայրենիքը:

Այս նակատագրական պահուն, երբ ամբողջ հայութիւնը իշխանութիւններէն կը սպասէ արմատական եւ կտրուկ լուծումներ՝ կապուած վերոյիշեալ խնդիրներուն, Հայաստանի Հանրապետութեան նախագահը անակնկալ քայլով մը կ'որոշէ կուսակցական համաձայնութիւն մը կնքել նախագահական պալատին մէջ, որ համայն հայրենի ժողովուրդին սեփականութիւնն է, ոչ թէ Հանրապետական կուսակցութեանը:

Իշխող ՀՀԿ-ի եւ ՀՅԴ-ի միջեւ կնքուած համաձայնութեամբ, վերջինիս կը տրուէր 3 նախարարութիւններ եւ 2 մարզեր, այն ալ խորհրդարանական ընտրութիւններէն 1 տարի առաջ՝ յառաջացնելով իրենց հարցման նշաններ: Տրամաբանական պիտի ըլլար այն, որ երկու կուսակցութիւններ համաձայնութիւն կնքելով երբեք ընտրութեան եւ յարթել ետք միայն, կատարուի պաշտօններու բաժանում ու իւրաքանչիւր կողմ պաշտօն ստանայ իր արձանագրած արդիւնքին համեմատ: Հոս լիովին հակառակ գործընթացն է որ տեղի ունեցաւ, եւ ակամայ կը մտածենք, թէ ընտրակաշառփի եւ ընտրութիւնները կեղծելու միտումով կատարուած քայլ մըն է:

Այս ծանր օրերուն նախընտրելի պիտի ըլլար որ, Սեբժ Սարգսեան եւ իր կուսակցութիւնը հայրենաշինութեան գործին համար, փորձէին բոլոր ուժերը ներգրաւել, ստեղծելով ազգային միասնականութեան կառավարութիւն մը եւ այդպիսով բոլորը պատրաստուէին դիմակայելու յառաջիկայ օրերուն մարտահրաւերները, որոնք այնքան ալ հեշտ պիտի չըլլան մեր հայրենիքին ու ժողովուրդին համար:

Վերջին այս գարգացումներէն մեկնելով կարելի է եզրակացնել, որ իշխող համակարգը փոխանակ մտածելու ժողովուրդի վիճակը բարելաւելու մասին, զբաղած է քաղաքական խաղեր սարքելով: Կառավարութեան կազմի անհասկնալի ընդլայնումով ու ընտրական տարօրինակ նոր օրէնք մը հրապարակ նետելով՝ բաձայայտ կը դառնայ, որ անոնց միակ նպատակն է եւ այդքան ալ մտահոգուած չեն երկրի ապագայով:

«ՄԱՍԻՍ»

### Հայաստանի Իշխանութիւններու Պատրաստած Ընտրական Նոր Օրինագիծը Խորհրդարանական Յաջորդ Ընտրութիւնները Կեղծելու Ծրագիր Կը Նկատուի

Հայաստանի իշխանութիւններուն կողմէ պատրաստուած Ընտրական Օրինագիծը նոր նախագիծը դրուեցաւ շրջանառութեան մէջ եւ անմիջապէս արժանացաւ ընդդիմադրութեան, լրատուական կազմակերպութիւններու եւ իրաւապաշտպան կազմակերպութիւններու քննադատութիւններուն:

Իշխող «Հանրապետական» կուսակցութեան կողմէ ներկայացուած Ընտրական Օրինագրքի նախագիծը ոչ թէ օրէնագրք է, այլ յայտարարութիւն, որ իրենք չեն պատրաստուի հեռանալ, ըսաւ «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեան:

«Սա այսօրուայ բռնապետական իշխանութեան յայտարարութիւնն է», աւելցուց պատգամաւորը:

«Պարզուած է՝ այս Սահմանադրական դրոյթը արդէն իսկ շրջանցուած է՝ հակասելով իրենց իսկ կողմից ընդունուած Սահմանադրութեանը: Այս նախագիծով փորձուած են ցուցակներով ընտրութիւն անցկացնել, իսկ մենք պայքարում էինք, որ մեծամասնական ընտրակարգը վերանար», - ըսաւ Զարուհի Փոստանջեան:

«Զէ՛ք Անցկացնի» նախաձեռնութիւնը, որ կը պայքարէր սահմանադրական փոփոխութիւններուն դէմ, այժմ մտադիր է ընտրական նոր օրէնագրքի մշակման շուրջ միասնական ճակատ ձեւաւորել:

Շարժման անդամ Դաւիթ Յովհաննիսեանի համաձայն, հասարակութեան պահանջները բազմազան են: Բոլորը համակարծիք են որ, քուէարկած անձերու ցուցակները


հրապարակուին, տեղամասերէն ուղիղ հեռարձակուած կատարուի ու մատնեւրու թանաքոտման մեքանիզմ ներդրուի:

«Թրանսպարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը նոյնպէս մտադիր է առաջարկութիւններու փաթեթ ներկայացնել իշխանութիւններուն: Կառուցի անդամ Արմէն Գրիգորեան կը պնդէ որ, քուիսներու ետեւ մշակուած նախագիծը չարտացոլացներ հասարակութեան պահանջները. - «Ամենատարրական եւ ամենակարգի նական այն բաները, որ պէտք է կազմակերպուէին ու հանրութիւնը ներգրաւէին, դրանով իսխտուել են»:

Լրագրողական կազմակերպութիւններու ղեկավարները եւս ան-

Շարք էջ 7

### «Ակօս» Թերթը Գաղտնագերծած Է Թրքական Հետախուզութեան Փաստաթուղթը



Պոլսոյ մէջ լոյս տեսնող Հայկական «Ակօս» թերթը կը տեղեկացնէ որ, Թուրքիոյ Ազգային Հետախուզական Մտաւորութիւնը (MIT) ուշադրութեամբ հետեւած է Հրանդ Տինքի սպանութեան գործի դատավարութեան եւ յատուկ կազմուած գաղտնի փաստաթուղթերու մէջ կանոնաւոր կերպով արձանագրուած է դատավարութեան մանրամասնութիւնները: Մտաւորութիւնը հաւաքած է նաեւ այդ ժամանակահատուածի ընթացքին ազգային փոքրամասնութիւններուն ու հասարակական կազմակերպութիւններուն վերաբերող հետախուզական այլ տուեալներ եւ այդ ամէնը ամփոփած է մէկ ընդհանուր փաստաթուղթի մէջ:

2011 թուականին կազմուած այդ գաղտնի փաստաթուղթը վերնագրուած է՝ «Այլ էթնիկ անջատական ակտիւութիւն», իսկ ենթավերնագիրն է՝ «Արմենիանիզմ»: Փաստաթուղթը յայտնուած է «Ակօս» թերթի տրամադրութեան տակ, եւ թերթը հրապարակած է զայն:

Գաղտնագերծուած փաստաթուղթը նաեւ ցոյց կու տայ, որ

Թուրքիոյ Ազգային Հետախուզական Մտաւորութիւնը կանոնաւոր կերպով հետեւած է ոչ միայն Հրանդ Տինքի դատավարութեան ու հայերուն, այլեւ ոչ մահմետական միւս փոքրամասնութիւններուն՝ արձանագրելով նաեւ անոնց գործունէութեան ակտիւութիւնը:

Գաղտնի փաստաթուղթը 2011-ի Մարտի 1-էն մինչեւ 30-ը ինկած ժամանակահատուածին վաւերագրուած է հայերու, յոյներու, սուրիացի քրիստոնեաներու եւ ոչ մահմետական այլ փոքրամասնութիւններու ակտիւութիւնը: Ըստ «Ակօս»-ի հաղորդման՝ հետախուզական կազմակերպութիւնը այդ տուեալները պարունակող փաստաթուղթը ուղարկած է Թուրքիոյ ոստիկանութեան բոլոր բաժանմունքներուն, քրէական-հետախուզական բոլոր բաժիններուն՝ անոնց գործունէութեան նպատակը եւ օժանդակելու համար:

Թրքական հետախուզութիւնը նոյնիսկ հետեւած ու արձանագրած է, թէ Տինքի ընտանիքը ինչպէս ծախսած է Եւրոպական Դատարանի որոշմամբ ստացած փոխհատուցման՝ 105 հազար եւրօ գումարը:

### Համաշխարհային Դրամատունը Հայաստանի համար Այս Տարի Կը Գնախառնէ Յաճախ Գնահատուած Աճ



Այս տարի Հայաստանը կ'ունենայ ամենացած տնտեսական աճը 2010-էն ի վեր, նշուած է Համաշխարհային Դրամատան հրապարակած տեղեկագրին մէջ:

Միջազգային ֆինանսական կառուցի հրապարակած ամսական տնտեսական վերջին տեղեկագրին համաձայն, անցեալ տարին Հայաստանի տնտեսութիւնը փակած է 3 տոկոս աճով, սակայն այս տարի տնտեսական աճը 2.5 տոկոսէն աւելի չի կրնար ըլլալ, ինչ որ վատագոյն ցուցանիշն է նախորդ չինգ տարիներուն համեմատ:

Համաշխարհային Դրամատան համաձայն, նման ցած տնտեսական աճը պայմանաւորուած է Ռուսաստանի տնտեսական անկումով եւ Հայաստանի տնտեսութեան կառուցուած քային թուրութիւններով:

Հակառակ այս գնահատականներուն, Հայաստանի իշխանութիւնները աւելուած արտաքուստ կը շարունակեն պահպանել լաւատեսութիւն: Երբ վարչապետ Յո-

Շարք էջ 7

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԵՐԲ ՉԿԱՅ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՇՆԱՄԻՆ», ԹԱՓ Է ՀԱԲԱՔՈՒՄ ԹԱԲՇԵԱՅ ՅԵՂԱՇՐՋՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՍԸ

Նոյնսիկ ՀՅԴ-ի հետ համա- գործակցության յուշագրի ստորագրումից յետոյ կարելի է ասել, որ հայաստանեան ներքաղաքական դաշտում ՀՀԿ-ն մնացել է միայնակ, ինքն իր իշխանութեան հետ: Առաջին հայեացքից թուում է, որ ՀՀԿ-ն լուծել է մրցակիցների հարցն ու կարող է վայելել կեանքը, սակայն իրականում այդպէս չէ: Եւ ոչ միայն այն պատճառով, որ կեանքը երկրում, ըստ էութեան, բաւական արագ տեմպերով վատանում է, սոցիալ-տնտեսական իրավիճակը լարում է, տնտեսական կայունութիւնը պահուում է բարակ թելով: Սրանք, իհարկէ, ինքնին բաւարար են Հանրապետական կուսակցութեան մեծ խնդիրների համար, սակայն այս ամէնով հանդերձ՝ ՀՀԿ-ն ունի առաւել խորքային խնդիրներ՝ գոտս ներքաղաքական յարաբերութիւնների, այսինքն՝ ներկուսակցական յարաբերութիւնների դաշտում: Եւ սա, ըստ էութեան,

դեցիկ է դառնում ներքաղաքական այլ շրջապատ, որը սակայն չի գնում առաջին դէմքի արագ փոփոխութեան՝ աւելորդ ցնցումայնութիւնից խուսափելու համար: Ի դէպ, Հայաստանն ունի թաւշեայ յեղաշրջման թէ մէկ, թէ միւս օրինակները: Վերջինը թերեւս կարող ենք համարել այն, ինչ տեղի ունեցաւ 2014 թուականին, երբ առաջին դէմքը չփոխուեց, սակայն փոխուեց նրա շուրջ ազդեցութեան գոտին: Իհարկէ, այլ հարց է, որ այդ գոտին գտնուեց ընդհանուր միջավայրին եւ մարտահրաշխանութիւնն այնքան անհամարժէք, որ շատ արագօրէն խժոնց իր իսկ իրականացրած թաւշեայ յեղաշրջման արդիւնքը: Դրա պատճառներից մէկն էլ երեւի թէ այն է, որ ինքնին այդ յեղաշրջում իրականացրած սուբէկտներին ներսում էլ մեծ էր ռեսուրսային ճգնաժամի ազդեցութիւնը եւ դրանով պայմանաւորուած որոշակի հակադրութիւնը

Հայաստանի իշխող համակարգը փոքր ռեսուրսներ տնօրինող համակարգ է: Դրան գումարում է նաեւ արտաքին տնտեսական բացասական կոնիւնկտուրան, որը բերում է ներքին տնտեսական ճգնաժամի, եւ իրավիճակը էլ աւելի է սրում

պայմանաւորուած է հենց նրանով, որ ՀՀԿ-ն կապիտալիզմից իջնալին է եւ թարկել ընդդիմադիր դաշտը: Հայաստանի իշխող համակարգը փոքր ռեսուրսներ տնօրինող համակարգ է: Դրան գումարում է նաեւ արտաքին տնտեսական բացասական կոնիւնկտուրան, որը բերում է ներքին տնտեսական ճգնաժամի, եւ իրավիճակը էլ աւելի է սրում: Իսկ դա նշանակում է, որ մեծանում է ներքին տնտեսական կամ թաւշեայ յեղաշրջումների յաճախականութեան վտանգը: Միաժամանակ, քանի որ չկայ ուժեղ եւ ազդեցիկ ընդդիմադիր բեւեռ, իշխանութեան համակարգի ներսում առաջանում է որոշակի թուլացածութիւն եւ անբռնազբօսութիւն, վերանում է վախը, որ ներքին անկարգապահութիւնը կարող է բերել արտաքին սպառնալիքի ուժեղացման եւ ընդդիմութեան աշխուժացման: Այդ վտանգը իշխանութեան ներսում նպաստում է «ատամները սեղմելուն» եւ «ընդհանուր թշնամու» առաջ համակարգը չթուլացնելուն: Երբ այդ «ընդհանուր թշնամին» չկայ, համակարգը ներքուստ թուլանում է, եւ թաւշեայ յեղաշրջումների մեխանիզմը աւելի է թափ հաւաքում: Աւելին՝ այստեղ խնդիրը բազմաշերտ է, եւ այդ ներքին տնտեսական յեղաշրջումները միշտ չէ, որ արտադրատու են առաջնորդների փոփոխութեամբ: Երբեմն փոխուում են առաջնորդի շուրջ ուժերի դասաւորութիւնները, եւ ամէն ինչ աւարտում է ազդեցութեան աղբիւրի փոփոխութեամբ. եթէ մինչ յեղաշրջման առաջնորդը գտնուում էր իքս աղբիւրի ազդեցութեան ներքոյ, յեղաշրջումից յետոյ ազ-

տարբեր թեւերի միջեւ: Միւս կողմից՝ թաւշեայ յեղաշրջումները ճգնաժամային փուլերում, ըստ էութեան, հանդիսանում են ամբողջատիրական իշխող համակարգերի կենսատնտեսական միջոցներ: Չունենալով օրինական իշխանափոխութեան հնարաւորութիւն՝ հասկանալի պատճառներով (այդ իշխանափոխութիւնը կը լինի համակարգի մահը) ամբողջատիրական համակարգերը յաճախ «կամաւոր» են գործադրում թաւշեայ իշխանափոխութեան մեխանիզմը, որը գործի է դրում համակարգի ներքին պայմանաւորուածութիւնների, ներքին կանոնների շրջանակում: Իշխանափոխութիւնը այն մեխանիզմն է, որը թոյլ է տալիս պատասխանատուութեան ծանրութեան կեդրոնի փոփոխութեամբ եւ քաղաքական մրցակցութեան միջոցով յաղթահարել սոցիալ-հոգեբանական, տնտեսական ու քաղաքական մարտահրաշխանները: Հայաստանի իշխանութիւնը ինքն իր կամքով արգելափակել է դրա օրինական, սահմանադրական հնարաւորութիւնը: Այդպիսով իշխանութիւնը լիցքաթափում է թաւշեայ յեղաշրջումներով՝ մենակ մնացած լինելով ժամանակի մարտահրաշխանների դէմ եւ չունենալով իշխանութեան ներքին մոտիւացիաները ակամայ խթանող ուժեղ ընդդիմութիւն: Ներկայումս իշխանութիւնը թեւակոխել է նոր թաւշեայ յեղաշրջման փուլ, որի շնորհիւ փորձ է արւում փոխհատուցել ռեսուրսների սղութիւնը նախընտրական բաւական բարդ եւ ծանր շրջանում: «ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ»

ԷՂՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՊԱՇՏՕՆԱՆԿՈՒԹԻՒՆԸ

ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ

Սերժ Սարգսեանը հրամանագիր է ստորագրել արտաքին գործերի նախարարի նոր տեղակալ նշանակելու մասին, որը զբաղուելու է արտաքին տնտեսական կապերով: Սերժ Սարգսեանի այդ քայլը նրա նոր նախաձեռնութեան շարքից է: Սարգսեանը յայտարարել է արտաքին տնտեսական յարաբերութիւնները խորացնելու վերաբերեալ խորհրդակցութիւնների շարք սկսելու մասին եւ արդէն իսկ արել է երեք խորհրդակցութիւն՝ Իրանի, Աւստրիայի եւ Ֆրանսայի թեմայով: Դրանից յետոյ Սարգսեանը կատարել է նոր նշանակումը: Այդ պաշտօնում աշխատելու է Ռոբերտ Յարութիւնեանը: Սակայն, տուեալ դէպքում գուցէ ոչ այնքան էական է անձը, որքան գործընթացն ինքնին, առաւել էւս, որ անձերի մասով կարծես թէ բաւական ընդգծուած է այն իրողութիւնը, որ Սարգսեանի վերջին օրերի կադրային քաղաքականութիւնը միտուած է իշխանութեան առանցքային դիրքերում անձնապէս հաւատարիմ մարդկանց նշանակումը: Ինչ վերաբերում է գործընթացին, ապա արտաքին գործերի նախարարութիւնում արտաքին տնտեսական կապերի աշխատանքով զբաղուող նոր փոխնախարարի հաստիքի սահմանում փաստացի նշանակում է, որ սահմանուել է Հայաստանի դէ ֆակտո նոր արտգործնախարար: Դա իհարկէ հիպոթետիկ դիտարկում է, որի հիմքը սակայն առկայ իրականութիւնն է: Սեպտեմբերի 3-ը ընդգծուած ցոյց տուեց, իսկ յետագայում էլ դա բաւական ցցուն դրսեւորումներով արտայայտուեց, որ Հայաստանը գործնականում չունի արտաքին քաղաքականութիւն՝ այն վերածուել է ռուսական կցորդի, սպասարկում է աւելի շատ Ռուսաստանի, քան Հայաստանի շահն ու անվտանգութիւնը: Դրա առաւել վառ վկայութիւնն էր այն, որ այդ շահն ու անվտանգութեան համար արտաքին քաղաքական դէ ֆակտո գործառույթներ սկսեց իրականացնել պաշտպանութեան նախարարութիւնը՝ բանակի ռազմական խնդիրների արտաքին քաղաքական լիարժէք սպասարկումը իրականացնելու համար: Զինուած ուժերը ստանձնեցին արտաքին քաղաքականութեան ռազմա-քաղաքական այդ բաղադրիչի բացը: Բաց էր մնացել արտաքին քաղաքականութեան Հայաստանի համար ներկայում գերկարեւոր միւս՝ տնտեսական բաղադրիչը, որն էլ իրականացնելու համար Սերժ Սարգսեանը փաստօրէն նշանակում է նոր փոխարտգործնախարար:

Տնտեսական արտաքին կապերի դիւերսիֆիկացումը խոշոր հաշուով պայմանաւորում է պետութեան արտաքին քաղաքականութեան ճկունութիւնը: Եթէ Հայաստանի արտգործնախարարութիւնը ժամանակին արդիւնաւէտ զբաղուէր այդօրինակ խնդիրներով, ապա անկասկած բոլորովին այլ կը լինէր արտաքին քաղաքական պոտենցիալը եւ անկախութիւնն ընդհանրապէս: Իհարկէ, սրան անկասկած գումարում է այն, որ այդ հարցում արտաքին քաղաքականութիւնը չի կարող ինքնին արդիւնաւէտ լինել, եթէ չկայ համարժէք ներքին քաղաքականութիւն: Սակայն, այդուհանդերձ, Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան վերջին տարիների համակողմանի տապալումն ակնյայտ է, եւ Սերժ Սարգսեանի նոր նշանակումը փաստացի ամբողջացնում է այդ տապալման պետական ճանաչումը: Խոշոր հաշուով, առկայ գործընթացները վկայում են, որ արձանագրւում է դրա համար արտգործնախարար էդուարդ Նալբանդեանի պատասխանատուութիւնը: Փաստացի, արտաքին քաղաքականութեան մի կարեւոր գործառույթը վաղուց իրականացնում է գինուժը, միւսի համար կատարւում է նոր նշանակում, Նալբանդեանը դէ ֆակտո յայտնուում է լուսանցքից դուրս, եւ դէ ժիւրէ ձեւակերպումներ հաւանաբար ուշանում են այն պատճառով, որ Սարգսեանը չի ուզում խորհրդարանի ընտանութիւնից առաջ գնալ քայլերի, որոնք ենթադրում են յետագայ բաւական բարդ արտաքին կոնսուլտացիաներ: «ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ**  
ՇԱԲԱԹԱԾԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԾԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՂԷ ԱԶԱՊԱԳԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

Զեր Ծանուցումները  
Վստահեցէ՛ք  
«Մասիս»  
Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680  
massis2@earthlink.net



# ԼՈՒՐԵՐ

## «Հայաստանին Անհրաժեշտ է Մեծացնել Սեփական Դերը Տարածաշրջանում»

Ամերիկացի վերլուծաբաններն ընդգծում են՝ Հայաստանը պետք է բարելավի կառավարումը եւ արդիւնաւէտ պաշտօնակազմի կազմաւորումը:

Ստեղծուող նոր իրավիճակում զարգացման եւ անվտանգութեան ապահովման համար Հայաստանին անհրաժեշտ է գրաւել Արեւմուտքի ու շաղկապը՝ նորամուծութիւններ ու նոր լուծումներ առաջարկել, համոզուած են ամերիկացի վերլուծաբանները:

«Միացեալ Նահանգներում եւ ընդհանրապէս Արեւմուտքում մարդկանց մեծամասնութիւնը ցանկանում է Հայաստանը բարգաւաճող տեսնել, քանի որ Հայաստանին դրական են վերաբերում»:

Հայաստանում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջոն Էվանսի խօսքով, երկրին անհրաժեշտ է առաջին հերթին բարելավել կառավարման ոլորտն ու բարեփոխումներ իրականացնել, որոնց թոււմ դեպքում նշում է սահմանադրական բարեփոխումների ընդունումը. - «Միջոցներ դա կ'ամրապնդի քաղաքական կուսակցութիւնների համակարգը, եւ կառավարութեան վարկանիշը կը բարձրանայ քաղաքացիների աչքերում»:

Կառավարման բարելավումն ու կոռուպցիայի դէմ արդիւնաւէտ պայքարը Հայաստանի առաջնահերթ նպատակներն են՝ յաջողութեան հասնելու համար, համոզուած է Գերմանական Մարշալի հիմնադրամի վերլուծաբան Ջոշուա Ուոքերը: «Հայաստանը պետք է իրական առաջարկներ դնի սեղանին, նո՞ր գաղափարներ առաջարկի, առաջ բերի նոր սերնդի առաջնորդներ»,- ասում է նա:

Վերլուծաբանի խօսքով, Հայաստանին անհրաժեշտ է նաեւ մեծացնել սեփական դերը տարածաշրջանում՝ մեծ դերակատարների համար հետաքրքիր դառնալու նպատակով. - «Դա ներառում է Ռուսաստանի եւ այլ գործընկերների հետ աշխատանքը՝ Իրանի նոր դերից շահեր քաղելու միջոցներ հայթայթելու նպատակով»:

Տնտեսական խնդիրներից եւ արտագաղթը կանխելուց բացի, Հայաստանը որոշ անելիքներ ունի նաեւ արտաքին ասպարէզում, համոզուած է «Ամերիկեան ձեռնարկատիրութիւն» հաստատութեան վերլուծաբան Մայքլ Ռուբինը:

«Այսպիսով, Արեւմուտքի ուղղութեամբ, հիմնական նպատակների հետ միասին, Հայաստանն ունի դիւանագիտական եւս մէկ նպատակ, այն է՝ ներկայանալ որպէս ինքնուրույն ուժ, որը Մոսկուայից կախուածութեան մէջ չէ», - ընդգծում է Ռուբինը:

Ջոն Էվանսն այս խնդրին այլ կերպ է նայում. - «Հայաստանը իր անվտանգութիւնն ապահովելու հարցերում ստեղծուած իրավիճակում ստիպուած է յենուել Ռուսաստանի վրայ, այնպէս որ, տարածաշրջանին ծանօթ մարդիկ նման սերտ համագործակցութեանն ըմբռնումով են մօտենում»:

Կարեւորն այն է, ընդգծում է դեսպանը, որ Հայաստանը եղել եւ մնում է ԱՄՆ-ի սերտ դաշնակիցը եւ չի փոխել ժողովրդավարութեան զարգացման ուղղուածութիւնը:

## «Նողկալի է Տեսնել, Թէ Ինչպէս Է ԵՄ-ն Խոնարհուում Երդողանի Առաջ»

ԵՄ-Թուրքիա զագաթնաժողովի ժամանակ Թուրքիայի նախագահի առջեւ գլուխ խոնարհող եւրոպական առաջնորդների տեսքը զգուշի էր: Ինչպէս հաղորդում է «Արմենպրես»-ը՝ այդ մասին գրել է բրիտանական The Guardian-ի վերլուծաբան Փոլ Մեյսոնը:

«Եւրամիութիւնն օգնութիւն է փնտռում այն երկրի միջրացիոն ճգնաժամի լուծման համար, որում էլ աւելի է ամրապնդուում բռնապետութիւնն ու գրաքննութիւնը: Թուրքիան պատերազմ է մղում էթնիկ փոքրամասնութիւնների դէմ, ոստիկանական յստուկ ջոկատայինները գրոհում են իշխանութիւններին ընդդիմադիր Zaman թերթի գրասենեակի վրայ, նրա գաղտնի ծառայութիւնները մեղադրում են «Խսկմական պետութիւն» ահաբեկչական խմբաւորմանը գինեղու մէջ, նրա գինուորականները խոցում են ռուսական ուժակործիրը, եւ չնայած այս ամէնին՝ Անկարան յոյս ունի դառնալ Եւրամիութեան անդամ», - փաստել է վերլուծաբանը:

Մեյսոնի խօսքով՝ դեռ եւս երեք տարի առաջ թոււում էր, որ Ռեջեփ Թայիփ էրդողանին յաջողուել է երկրի ներսում հասնել հաւասարակշռութեան: «Կարելի էր եզրակացնել, որ հասարակութեան առաջադէմ մասը կը կարողանայ խաղաղ գոյակցել՝ մէկը միւսին թողնելով հանգիստ, բրդերը ապստամբական պայքարի փոխարէն կը գրաւուէն խորհրդարանական ընդ-

դիմութեան դիրքերը, իսկ էրդողանն անձամբ երկիրը կը տանի ԵՄ անդամակցութեան, սակայն բաւականին դանդաղ, որպէսզի ժողովրդավարութեան ակնյայտ թերութիւնները հնարաւոր լինէր անտեսել:

Սակայն այժմ ամէն ինչ փոխուել է: Թուրքիայի նախագահը կոշտ արձագանք է տալիս բողոքի ակցիաներին, նա խափանեց Քրդական աշխատաւորական կուսակցութեան հետ վերջնական գինադարը եւ փաստացի այրեց Թուրքիայի հարաւի մի քանի քաղաքներ, որտեղ գտնուում էին քրդերը: Դրան ի պատասխան Եւրամիութիւնն աչք է փակում Թուրքիայում ժողովրդավարութեան խաթարման եւ խաղաղ բնակչութեան դէմ ռազմական գործողութիւնների վրայ», - ընդգծել է վերլուծաբանը:

Մեյսոնի խօսքով՝ այդ ամէնը, սակայն, ոչինչ է, համեմատած այն խաղաքարտի, որն էրդողանը կարող է խաղարկել: «Ձախողուած եւ քայքայուած պետութիւնների ֆոնին, ինչպիսիք են՝ Աֆղանստանը, Եմենը, Իրաքը եւ Սիրիան, որքան շատ այն յաջողութիւններ է հանդուրժում թուրքական ժողովրդավարութիւնը, այնքան Արեւմուտքը պետք է նրան աջակցի: Եւ որքան շատ եւրոպական յանձնաժողովը, մասնաւորապէս, պնդում է, որ օրերից մի օր Թուրքիան կը դառնայ ԵՄ անդամ, այնքան ուժեղ են դառնում Եւրոպայում այն խաղաղողները, ովքեր ցանկանում են

## Կան սիրիահայեր, Որոնք Հասնում են Եւրոպա, Ետ գալիս. Հրանոյ Հակոբեանը՝ Հայաստանը Լքողների Մասին

Հայաստանի Սփիւռքի նախարար Հրանոյ Հակոբեանը համաձայն չէ, որ շատ սիրիահայեր, դժգոհելով հայաստանեան պայմաններից, հեռանում են:

NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նախարարն ընդգծեց, որ նոյնիսկ կան սիրիահայեր, որոնք մեկնում են Եւրոպա, սակայն որոշ ժամանակ անց վերադառնում Հայաստան:

«Կան մարդիկ, որոնք գնում են: Կան մարդիկ, որոնք վերադառնում են: Կան մարդիկ, որոնք հասնում են Եւրոպա, Կանադա, բայց որոշ ժամանակ անց հետ են գալիս: Շարժման մէջ է այս ամէնը, մեր ժողովրդին բնորոշ է շարժումը, եւ սա վերաբերում է ոչ միայն սիրիահայերին», - ասաց Հրանոյ Հակոբեանը:

Սփիւռքի նախարարի խօսքով՝ որոշ սիրիահայեր էլ Հայաստանից մեկնում են այն երկրներ, որտեղ իրենց ընտանիքն է գտնուում: Այս փաստը, ըստ Հրանոյ Հակոբեանի, ողջունելի է, քանի որ ընտանիքների միացում է տեղի



Սփիւռքի նախարար Հրանոյ Հակոբեան

ուսնում:

«Այնպէս որ մասսայական չէ բողոքելը կամ սիրիահայերի հեռանալը»:

Նշեց, որ վերջին շրջանում սիրիահայերը շատ են դժգոհում հայաստանեան սոցիալ-տնտեսական պայմաններից, գործազրկութիւնից, ապրանքների թանկացումից: Հարկաւոր սիրիահայեր արդէն չեն Հայաստանը:

## Ռազմական Խորհրդի Նիստ Լեռնային Ղարաբաղում



Ստեփանակերտում Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարար, Պաշտպանութեան բանակի հրամանատար Լեւոն Մնացականեանի նախագահութեամբ տեղի է ունեցել ռազմական խորհրդի նիստ՝ նուիրուած մարտական հերթապահութեան կազմակերպման եւ կրման, դիտարկման համակարգի, ինժեներական արգելափակոցների եւ ամրաշինական կառուցների վիճակին ու դրանց կատարելագործման ուղիներին:

Լեւոնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութեան մամուլի ծառայութեան փոխանցմամբ՝ Պաշտպանութեան բանակի հրամանատարը, կարեւորելով օրակարգի հարցերը, նաեւ անդրադարձ է կատարել տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական

իրադրութեանը, նախանշել ոլորտի հետագայ զարգացման հիմնական ուղղութիւնները:

Օրակարգային թեմայի շուրջ ելոյթներով ու գեկոյցներով հանդէս են եկել բանակի հրամանատարի տեղակալները, միաւորումների եւ զօրամասերի հրամանատարները, շտաբի համապատասխան բաժինների ու ծառայութիւնների պետերը:

Խորհրդակցութեան աւարտին գեներալ-լեյտենանտ Մնացականեանը յանձնարարել է կատարուած առաջարկութիւններն ու դրանցից բխող հետեւութիւններն ընդունելի գիտութիւն եւ առաջնորդուել մարտական հերթապահութեան կազմակերպման եւ կրման ընթացքում, ասուած է հաղորդագրութիւնում:

դուրս գալ միութիւնից», - նշուած է յօդուածում:

«Եւրամիութեան քաղաքացիներն իրաւունք ունեն ճշմարտութիւնն իմանալ Թուրքիայի մասին: ԵՄ իշխանութիւնները ոչ հեռու անցելուց՝ նախորդ նոյեմբերին, գովերգում էին Անկարային տնտեսական յաջողութիւններ համար, չնայած նրան, որ արդէն այն ժամանակ տեսանելի էին բռնապե-

տութեան նշանները: Գլխաւորը մնում է հարցը՝ արդեօք կարող է պետութիւնը, որն ակնյայտօրէն խախտում է ԵՄ անդամակցութեան բոլոր չափանիշները, յաջողութիւններ ունենալ միութեան մէջ: Պատասխանը միայն մէկն է. իհարկէ չի կարող, եւ եւրոպական իշխանութիւնները պետք է այդ մասին տեղեկացնեն էրդողանին», - վստահ է Guardian-ի վերլուծաբանը:







### ՆՇՈՒԵՑԱԲ ՀԱՅ ԼԵՌՆԱԳՆԱՑՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 3-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ



Հարաւային Գալիֆորնիոյ մարզասէր հասարակութեան համար վերջին տարիներուն հանրածանօթ անուն մը դարձաւ Հայ Լեռնագնացներու Ընկերակցութիւնը (Armenian Hikers Association) որուն սկզբնատառերով ճանչցուած է նաեւ որպէս AHA կամ ԱՀԱ...:

Փոքրաթիւ անձնակազմով ճամբայ ելած այս ընկերակցութիւնը շուտով ծաւալ ստացաւ եւ լեռնագնացներու թիւը հասաւ քանի մը տասնեակի: Անոնք հաւատացողներն են «առողջ միտք առողջ մարմնի մէջ» սկզբունքին:

Արդարեւ լեռնագնացներու այս խումբին մաս կը կազմեն երիտասարդ եւ միջին տարիքի անհատներ, ամուսնացած կամ ամուրի: Անոնք իրենց շաբաթական ծրագիրներով կ'ընտրեն հարաւային Գալիֆորնիոյ տեսարժան եւ հետաքրքրական բլուրները, լեռնանոցներն ու արահետները, որոնք բաժնուած են երեք տեսակի՝ դիւրին, միջակ եւ դժուար արշաւներ: Իսկ տարածութիւնը 3-5 մղոն (5-8 քմ.): 2014 թուականին ԱՀԱի անդամները բարձրացան Արարատ լեռը: Իրենց համար պատմական եւ դժուարին ուղեւորութիւն մըն էր, զոր աւարտեցին մեծ յաջողութեամբ: Սակայն այդ «յաղթական» երթին համար անոնք համապատասխան վարժութիւններ ըրած էին ամիսներ շարունակ, Գալիֆորնիոյ տարբեր տարածքներու վրայ:

Անցեալ Կիրակի Մարտի 6ին 2016 Հայ Լեռնագնացներու Ընկերակցութիւնը գեղեցիկ գաղափար մը չղացած էր նշելու իրենց հիմնադրութեան 3րդ տարեդարձը: Հանդիսութեան վայր ընտրած էին Լա Քրէսէնթիայի բարձունքին վրայ գտնուող գեղատեսիլ «Տանամօր Բարք» զբօսայգիի դահլիճը:

Հակառակ աննպաստ օդին նախատեսուած 60 հոգիի փոխարէն

սրահ եկած էին 80 լեռնագնացներ եւ համակիրներ: Իւրաքանչիւր մասնակից իր հետ բերած էր ուտելիք մը եւ այդ իսկ պատճառով երեւան եկաւ այլազանութիւններով բեռնաւորուած ճոխ սեղան մը...:

Հայկական դրօշի գոյներով զարդարուած սրահէն ներս կը տիրէր իսկական տօնական ուրախ մթնոլորտ: Ստեղծուած էր ընկերա-ընտանեկան ջերմ սիրալիր եւ յարգալիր մթնոլորտ մը:

Ճաշէն ետք գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը: Այտա Պօղարեան ձեռնահասօրէն վարեց յայտագիրը: Յաջորդաբար խօսք առին Հայ Լեռնագնացներու Ընկերակցութեան հիմնադիր անդամներէն՝ Յարութիւն Արմէնեան, Ռոպերթ Ասատրեան, Սոնա Արմէնեան եւ Կարէն Եղբայրեան: Անոնք հետաքրքրական դրուագներ պատմեցին ընկերակցութեան հիմնադրութեան շարժառիթին, անունի ստեղծման, տուն տուող պատճառներուն եւ ցարդ կատարուած օգտակար աշխատանքներուն մասին: Յոյս յայտնեցին նաեւ որ ԱՀԱն իր մասնաճիւղերը կ'ունենայ նաեւ այլ հայաշատ վայրերու մէջ ալ:

Գործադրուեցաւ գեղարուեստական ինքնատիպ յայտագիր մը մասնակցութեամբ Յարութ Տէր Դաւիթեանի (երգ), Էդնա եւ Էլենա Քարիմեան քոյրերու (գուգերգ): Իսկ գրեթէ բոլոր ներկաներու մասնակցութեամբ տեղի ունեցան հայկական եւ եւրոպական պարեր դեկավարութեամբ Անահիտ Հարմանտայեանին:

Ներկաներուն «ուրախ տարեդարձ» խմբերգով հատուեցաւ տարեդարձի գեղազարդ կարկանդակը, որուն վրայ ամրացուած էր շաբարով պատրաստուած լեռնագնացի գոյգ կօշիկները...:

Յետ միջօրէի ներկաները զբօսայգիէն բաժնուեցան ընկերային ջերմ ու հաճելի ժամեր վայելած

### ԻՍ ՏՈՒՆՍ ԱՅՍՏԵՂ Է՛ ՈՐԴԻՒՍ ԿՈՂՔԻՆ՝ ՇԻՇԼԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄՕՏ. ԹՈՒՐԻՈՅ ՄԷՋ ՍՊԱՆՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԶԻՆՏԱՌԱՅՈՂԻ ՀԱՅՐ

Թուրքիոյ մէջ հայ գինձառայող Սեւակ Պալըքչըրի սպանութեան գործով դատական հերթական նիստը տեղի ունեցած է Փետրուարի 25-ին՝ Տիարպեքիւրի մէջ, ու յետաձգուած է մինչեւ Ապրիլի 6-ը: Յիշեցնենք, որ Սեւակը սպանուած էր 2011 թ. Ապրիլի 24-ին՝ Թուրքիոյ Պաթմանի Բողլուք շրջանին մէջ գինձառայութեան ընթացքին:

«Ակօս»-ը խօսած է Սեւակի՝ դատավարութեան մասնակցած հօր՝ Կարապետ Պալըքչըրի ու մօր՝ Անի Պալըքչըրի հետ: Խոսած են նաեւ անոնց՝ Հայաստան փոխադրուելու տեղեկութիւններու մասին:

Կարապետ Պալըքչըրն կը նշէ, որ դատավարութեան այդքան դանդաղ ընթացքը իրենց անիմաստ կը թուի: Ան քննադատած է դատարանը՝ ընդունած կեցուածքին պատճառով:

«Իմ որդիս խտրականութեան պայմաններու մէջ սպանուած է: Արդարութիւն կ'ուզենք՝ արդարութիւն չկայ: Որոշ բաներ ըսինք դատավորին, սակայն մեզ լուրջի չառին: Պահանջեցինք, որ այդ անձը (մարդասպանը) դատարան գալ, մերժեցին: Պահանջեցինք՝ դէպքի վայրին մէջ դարձեալ քննութիւն կատարեն, մերժեցին: Կասկածելին դատարան չի գար, ինչո՞ւ՝ չենք գիտեր», - ըսած է ան՝ դատավարութիւնը թատրոնի նմանցնելով:

Սպանուած Սեւակի հայրը կը շարունակէ պնդել՝ իր որդիին սպանութիւնը «դժբախտ պատահար» է, ինչպէս կը պնդէ գալն

սպանած Քրուանչ Աղաօղլուն: Սեւակը սպանած են դիտումնաւոր կերպով, եւ այդ մասին կը վկայեն ականատեսներու հակասական ցուցմունքները:

Կարապետ Պալըքչըրն կ'ըսէ, որ տեղի ունեցած դէպքէն ետք մինչեւ հիմա ոչինչ փոխուած է. նոյն տանջանքն է. «Մինչեւ հիմա, երբ մեր գլուխներ բարձին կը դնենք, անոր մասին կը մտածենք... Սեւակը... Անոր մասին կը մտածեմ, անոր հետ կը խօսիմ ամէնուր: Հոգեբանական օգնութիւն ստացած եմ, եւ այժմ ամէն շաբաթուան փոխարէն երկու շաբաթ մէկ գերեզման կ'երթամ: Չեմ կրնար չեթալ: Առանց Սեւակի ոչ մի օր չ'անցնիր: Կ'ըսեն՝ «Պատահար էր»: Այդ պատահար չէր, թող ապացուցեն, որոշ բաներ կ'ընդունիմ, բայց պատահար չէր»: Սեւակի մայրը՝ Անի Պալըքչըրն, կ'անդրադառնայ թերթերուն մէջ տարածուած լուրերուն, թէ իրենք Հայաստան գաղթած են:

«Կ'ըսեն՝ Երեւան փոխադրուած ենք: Ո՛չ, մենք այստեղ ենք, ոչ մէկ տեղ չենք գացած: Մեր տեղը այստեղ է, մեր որդին այստեղ է: Գացած ենք շրջելու, այո՛, եւ ոչ միայն Երեւան: Սակայն այստեղ ենք»:

Իսկ Կարապետ Պալըքչըրն կ'աւելցնէ. «Մենք այստեղէն հեռանալու մտադրութիւն չունինք: Իմ տունս այստեղ է, հոյսս այստեղ է: Ամենակարեւորը՝ իմ որդին Շիշլիի գերեզմանատան մէջ է պառկած, եւ ալ անոր կողքին պառկիլ կ'ուզեմ: Ինձ այս հողէն ոչ ոք չի քաշեր, քանի որ այս հողը մերն է՝ Բոլորինս»:

Ըլլալու գոհունակութեամբ եւ շնորհակալութիւն յայտնելով սոյն

միջոցառումը կազմակերպողներուն: Գ.Մ.

## El Niño Awareness and Public Forum

Presented by  
Armenian Athletic Association Ladies Society

### THURSDAY, MARCH 24, 2016

Starting at 7:00 p.m. – 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Keynote Speaker  
Pasadena Police Chief Phillip Sanchez

**FREE ADMISSION • ALL ARE WELCOME**  
Refreshments will be served

**MEHER BABIAN, D.D.S.**  
General Dentistry

---

1111 S. Glendale Avenue  
Suite 206  
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884  
Tel: (818) 547-1476



## Turkish Intelligence Agency Catalogued Hrant Dink Case Under 'Ethnic Separatist Activities'

ISTANBUL -- A confidential National Intelligence Organization (MIT) document published by the Turkish-Armenian weekly Agos has revealed that the intelligence organization had closely monitored a trial related to the 2007 murder of Turkish-Armenian journalist Hrant Dink and regularly recorded the details in a document titled "ethnic separatist activities." Cihan news agency reports based on Today's Zaman article.

The document dates back to 2011 and is titled "Other ethnic separatist activities" with a subtitle "Armenianism." The details about the Dink trial are written under this subtitle.

The document, which is included in a new indictment recently prepared on the murder of Dink, also reveals that MIT regularly monitored non-Muslim minorities in addition to Armenians and that the intelligence agency documented their activities similar to the way they documented Dink's murder case.

According to the Agos report, the document in question was sent by MIT to police departments across Turkey and to police intelligence units in order to contribute to police activities. The document recorded certain activities of Armenians, Greeks, Syriac Christians and the other non-Muslim minorities living in Turkey between

March 1 and 30, 2011.

The classified MIT document also reveals that the intelligence organization also regularly monitored and documented the activities of various civil society organizations and initiatives, such as People's Houses, Student Collectives, the Mothers for Peace initiative, the Brotherhood of the Rivers Platform and the Freedom and Solidarity Party (ÖDP).

The document also shows that MIT monitored how Dink's family spent compensation money paid to them by Turkey as a result of a European Court of Human Rights (ECtHR) ruling.

The ECtHR delivered its judgment on the Dink v. Turkey case on Sept. 14, 2010. In its ruling, the ECtHR found Turkey in violation of Articles 2 and 10 of the European Convention on Human Rights (ECHR). These articles are related to the "right to life" and "freedom of expression," respectively.

The MIT document states that Turkey paid 105,000 euros in compensation to Dink's family on March 8, 2011, following the court's ruling. "In this context, it was learned that the Dink family donated the compensation in question to the Hrant Dink Scholarship Fund established by the Commu-

Continued on page 4

## World Bank Forecasts Lowest Growth In Armenia Since 2010

YEREVAN (RFE/RL) -- The World Bank expects Armenia to have this year the lowest economic growth since 2010. The Armenian government, however, appears to be more optimistic in its GDP growth outlook for 2016.

In a recently published monthly economic update the World Bank notes that GDP growth in Armenia slowed to 3 percent in 2015 and is projected to remain sluggish at 2.5 percent in 2016, which is the lowest growth outlook for Armenia compared to the previous five years.

According to the World Bank, such low economic growth and projection are due to continued recession in Russia and structural weaknesses of the Armenian economy.

Armenian Prime Minister Hovik Abrahamian implied, however, that his government remained more optimistic in its GDP growth projections when he answered the RFE/RL Armenian Service's question on the current state of economic affairs in the country on Saturday. "We are going to move the economy forward, and I want to repeat that our success hinges on our unity," he emphasized.

Government officials in Armenia today try not to remember President Serzh Sarkisian's warning made in 2013 that the cabinets that fail to ensure an annual growth of at least 7 percent until 2017 will have to resign. No government since then has managed to fulfill the task, while growth figures have kept lowering.

The following excerpt from the World Bank report also prompts that the state of economic affairs in Armenia is not particularly good. "... Non-performing loans soared from 3.7 percent at the beginning of 2015 to above 9 percent towards the end of the year. Higher dollarization and currency mismatches in the balance sheet pose risks to banking sector stability and profitability. Total lending declined in 2015 by 3.1 percent."

The international financial institution also sees a problem in terms of maintaining public revenues. "Actual revenue collection in January 2016 was lower than a year ago, reflecting the trend of a continued decline in imports. The fiscal pressure observed last year may be experienced again in 2016 if the January trend continues," the World Bank report reads.

## Turkish PM, Askale Mayor to be Sued for Praising the Armenian Genocide, Threatening Kurds



ISTANBUL (Agos) – Turkey's Human Rights Association (IHD) will file criminal complaints against Prime Minister Davutoglu, who has been criticized because of his "Armenian gangs" statement, and Askale Mayor Basaran who said "I gratefully commemorate our honorable ancestors who wiped the Armenians off."

IHD Istanbul Branch Committee Against Racism and Discrimination declared that they will file criminal complaints against Prime Minister Davutoglu and Askale Mayor Basaran, "because they praised the Armenian Genocide and threatened Kurdish people with genocide".

Here is the call for press statement made on March 8 in front of

Caglayan Courthouse:

"In a time when crimes against humanity have been committed in the war against Kurds, Prime Minister, on February 27, said that 'HDP is in cooperation with Russia like Armenian gangs' and on March 3, Askale Mayor Enver Basaran 'gratefully' commemorated the Armenian Genocide during a 'theatrical Armenian massacre' that was played by children and we will file criminal complaints against them because they praised the Armenian Genocide and threatened Kurdish people with genocide.

On February 27, during a rally in Bingöl, Prime Minister Davutoglu said,

Continued on page 3

## NKR Representative Robert Avetisyan Discusses Karabakh Conflict at Thomas Jefferson School of Law



SAN DIEGO -- Permanent Representative of the Nagorno-Karabakh Republic (NKR) to the US, Robert Avetisyan, on Wednesday delivered a lecture at the Thomas Jefferson School of Law (TJSL), in San Diego.

The NKR Permanent Representative briefed on the formation and development of Artsakh's statehood, the past and present stages of the conflict between Azerbaijan and Karabakh, as well as the negotiation process. A special emphasis was put on the Azerbaijani-Karabakh conflict in

the context of international law.

After the speech, Robert Avetisyan answered the questions of the participants concerning the current developments in Artsakh, the political and economic situations in the NKR, as well as a range of other issues.

The lecture of the Artsakh representative, attended by representatives of the School's Armenian Students' Union and members of other Students' Associations, as well as by students and professors of law, was organized on the initiative of the School.

## Armenia-NATO Relations: Prospects and Challenges Ahead



YEREVAN (Mediamax) -- NATO desk officer for the South Caucasus Steffen Elgersma stated today that Armenia's contribution to international security is very impressive.

Steffen Elgersma spoke about it in Yerevan during a discussion titled "Armenia-NATO Relations: Prospects and Challenges ahead of the NATO Warsaw Summit".

"We appreciate Armenia's long-term participation in the NATO-led international peacekeeping operations and commitment for continuation. Despite the security challenges of this region, Armenia continues to contribute to international security, and this is very impressive", he said.

NATO desk officer noted that they are satisfied with relationship history with Armenia for more than 20 years and appreciate democratization in armed forces and steps taken towards enhancing the role of women in the defense sector.

Talking about the future of relations between NATO and partner countries, including Armenia, Steffen Elgersma stated that NATO will continue to be faithful to two important principles in this perspective.

"Firstly, NATO respects the choice of Armenia and all its other partners in the integration and membership in various formats. We have repeatedly stated that Armenia's membership to the Collective Security Treaty Organization (CSTO) is fully compatible with NATO-Armenia cooperation and Individual Partnership Action Plan's objectives.

Secondly, NATO respects the ambitions of its partners in the region. Georgia, for example, wants to join NATO. We are developing relations with Azerbaijan too, but at the same time want

to develop closer relations with Armenia and conduct closer work in reforms of defense, cyber security and other areas", said NATO desk officer.

He highlighted that NATO expects more creative ideas from Armenia in order to deepen relations.

Steffen Elgersma noticed that there have been many changes in global security environment, and new challenges emerged after 2014. According to him, these changes will be reflected in the relationship between NATO and its partners in the South Caucasus.

Talking about NATO Summit in Warsaw this July, NATO desk officer stated that challenges of South and East will be in the agenda.

Steffen Elgersma highlighted the regression of relations between NATO and Russia as one of the challenges of East.

այլ պէտք է զօրացնէ աւելիով: Եւ հոսկէ պէտք է տեսնել քրիստոնէային եւ եկեղեցիին մասնակցությունը աշխարհի մէջ: Մասնակցությունը մը, որ իւրապատուկ է, որովհետեւ՝ «Քրիստոնէան եւ քրիստոնէայ եկեղեցին կը մտնեն աշխարհի մէջ, բայց աշխարհին պէս չեն ըլլար» (Վեր. Յովհաննէս Ահարոնեան): Եւ իւրապատուկութիւնը կը կայանայ հոն, ուր իր մասնակցությունը աշխարհին մէջ կը ստեղծէ ծառայության կեանք մը, որ կը փոխէ եւ կը նորոգէ բարիին գիտակցութեամբ եւ Անոր պատկերին նմանութեամբ:

Այս իրականություն մէջէն է նաեւ, որ աւելիով պէտք է կարեւորել վեհափառ հայրապետին Ծառայության տարուան կոչը մեր հայկական իրականություն մէջ եւ անոր համար: Ծառայությունը, եթէ մէկ կողմէ պիտի դիտենք որպէս փոխող ու փոխուող ու նորոգող ու նորոգուող գործընթաց մեր ազգային եւ մշակութային կեանքերուն մէջ, բայց նոյնքան նաեւ մեր հայկական արժեքները ամրապնդող եւ տեւականացնող:

Ծառայությունը «Բարոյական պարտաւորություն է, հրամայական

Շար.ը էջ 18

  
**On the occasion of the 101st Commemoration of the Armenian Genocide**  
**ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS**  
 In Collaboration with  
**Pan Armenian Organizations**  
 Presents  
***Hrant Dink Oratorio***  
 Dedicated to the Legacy of Hrant Dink  
 Guest of Honor  
***Rakel Dink***  
 Composer : Majag Toshigian  
 Lyricist : Bercuhi Berberyan  
***Pan Armenian Choir & Orchestra***  
 Artistic & Choir Director: Stepan Gozumian  
 Music Director : Artashes Kartalian  
 Soloists  
 Soprano                      Soprano                      Tenor  
**Alenoush Yeghnazar    Nadima Avakian    Raffi Kerbabian**  
**Saturday, April 16, 2016 at 7:30 PM**  
**Ambassador Auditorium**  
**131 S. Saint John Ave.**  
**Pasadena, CA 91105**  
**For more Information & Tickets, Contact (818)342-0110**  
**Abril Bookstore (818)243-4112**  
**Sardarabad Bookstore (818)500-0790**  
**Berj Bookstore (818)244-3830**  
 or  
 bolsahye1976@gmail.com

# ՄԻ ՊԱՏԱՌԻԿ ԵՄ ՄԱԿԱՐԱՎԱՆՔԻ ՊԱՏՈՒՄՆԵՐԻՑ

«Ձուրը կը յորդի ամէն կողմ, քուրը կ'երգէ քաղցրահունչ, Գութիները կը լողան, գուռերուն շուրջ հաւաքուած»

Դանիել Վարուժան

### ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Մակարավանք... Կիպրոս կղզի...: Ֆրանսական ծագումով, Լուսինեան իշխանական տոհմից Կիլիկիայի պետութեան Լեւոն V-ըդ, թէ՛ VI-ըդ վերջին թագաւորի երկիր: Վկայում են, որ մինչեւ իսկ քսանմէկերորդ դարեր, նրանց տոհմից յետնորդներ են գոյատևում, որոնք լուսինեանների դօժը պարզած՝ յաղթ քայլում են իրենց ցեղի աշխարհի ոստաններով: Եզրպատի բնիկ Ղպտի քրիստոնեաներն էին Կիպրոսում Մակարավանքը հիմնադրել: Հաւանաբար, սրբալոյս մի վանահօր անունով այն անուանուել էր՝ Մակարավանք:

Պատմութիւնը նաեւ վկայում է, որ 13-14-րդ դարերին, Կիլիկիայի հայոց թագաւորութեան իշխանութեան ատեն, Մակարավանքին տիրացել էին հայերը: Վանքում միաբանութիւն էր եղել, որի անդամները Աստուծոյ ու նրա Որդու պաշտամունքին նուիրուելով հանդերձ, զբաղուել էին նաեւ մատուր աշխատանքով: Դարերին են հասել նրանց մտքից յորդած ձեռագիր մատենաները: Արմին-հայեր, որտեղ հասան քարերին, մագաղաթներին գրեցին իրենց ցեղի պատումները, տիեզերական խորհուրդի ճախարանքով լեցուն գիր, բանաստեղծութիւն յորինեցին, նրանց հանճարի լոյսը աշխարհներ բռնկեց, որոնք մատենան, մատենաներ եղան: Վանքի միաբանները բարեպաշտ ու իրենց դաւանած հաւատքին նուիրեալ մարդիկ էին եղել, վանքը սրբալոյս էին անուանել: Արմին-Հայ ու նաեւ ուրիշ ազգերի Բրիտանեայ մարդիկ վանքի տաճարում ուխտի էին եկել, նրա աւագանիկում իրենց մանչերին Նար Շովինարի ջրով օծել, «Բրիտանեայ»՝ յատարարել: Սիրոյ նարօտներով շղթայուած հարս ու փեսայ գոյգեր, վանքի սրբալոյս տաճարի կամարների տակ խոստովանել էին տէր ու հնազանդ լինել իրարու, մանչերի վեր պահած մոմերի լոյսը ժպիտ էր հոսել նրանց դէմքերին, կեանքի արբեցման խորհուրդ վառել նրանց սրտերին, կին ու ամուսին դարձել: Ուխտաւորներ, իրենց խոստումների իրականացման ու ննջեցեալների հոգիների անդորրի համար գառեր էին մատակարարել՝ արեւ, հարիսա եփել, որպէս սրբացած մատակարար, օրհնուած կերակուր հիւրասիրել այցելուներին, վանականներին: Վանքի տաճարի բացատ, նուագարաններն էին հնչել, թմբուկներն էին որոտացել, հարս ու փեսայ, հարսանեաց հանդէսի մարդիկ շղթայ կազմած իրենց նախնիների շուրջպարեր, մենագարեր էին բռնել, ցնծութիւն էր վանքում, կեանքի հեշտանքի, խորհածանքի հրավառութիւն էր:

Մակարավանք... ձորակի լանջին, եղեւնու անտառի հովանու տակ՝ դարերին էր թիկնել վանքը: Գլխաւոր մուտքի դարպասի չորս բոլոր վանքի երկյարկանի կառուցն էր: Միաբանութեան անդամների ու այցելուների կեցութեան համար՝ կառուցի վրայ յառնել էին երկու յարկանի շարքերով սենեակները: Տաճարի գմբէթին, իրենց հաւատքի խորհրդանիշ իսաչն էր կանգուն, եղեւնիներին օրօրած հովիկները գնում համբոյր շաղում

նրա երեսին: Նրա հարաւային դարպասի առջ բացատ էր, կողքի աստիճաններով իջնում էինք ձորակ, որի կողի աղբուրից առատ ջուր էր վազում: Այն գնում էր ուռզելու՝ ձորակի յատակը հասնող բազում դարաւանդներին որպէս դօժ ծածանող ծառերը: Երկնքից ու երկրի ընդերքից հոսած Արմին-հայերի Նար Շովինար աստուածուհու ջուր, կեանք պարգեւող ջուր: Երկնի կապուտին յենած Արմին-հայերի բարձրավանդակ, աշխարհակործան ջրերից մարդը միայն այնտեղ պիտի յաւերժէր, գնար աշխարհներ: Աստուածացան իրենց առաջնորդ քաջ մարդիկ, Վանայ ծովի ջրերում վահագնի ծնունդ եղեւ:

Վանքի միաբանութեան լուծարումից յետոյ, մի ժամանակ նրա կառույցը ու յարակից տարածքը պահպանում էր Ջէյթուն գաւառակում իր ազգի դուշմանի դէմ մղուած յաղթական մարտերի մասնակից՝ բնիկ Ջէյթունցի Ակուն Աղան: Կիլիկիայի կաթողիկոսը նրանց յորդորել էր նորէն կռուի չենել դուշմանի դէմ... ափսոս... հայրենագրուած Ակունը հասել էր Կիպրոս կղզի, անալով տեղի ազգային կազմակերպութեան կոչին, ընտանիքով հանդերձ ստանձնել էր վանքի հոգատարութիւնը: Հայոց շէնի մարդ, ձորակում դարաւանդներ էր պատել, նրա հողին ծառեր տնկել՝ որպէս խաչեր իր ցեղի նախնիներին: Մայրացել էին ծառերը, նրանց թեւերին ծիածան կապել, խոնարհել իրենց տիրոջը:

Ամառը աստիճի շոգ էր Նիկոսիայում, նրա ծայրամասի տարածքում էին Մեղգոնեան հաստատութեան կառուցները: Աղա Կարապետ ու Աղա Գրիգոր Մեղգոնեան եղբայրների լուսոյ տաճարի սանսանուհիները, իրենց երկար ամիսների ուսումնառութեան յոգնութիւնը թօթափելու համար՝ ամառային արձակուրդները անցնում էին Մակարավանքի կառուցում կամ նրա բարձունքի բլուրին բացուած վրաններում: Միխիթարեան Միաբանութեան արբանայր՝ Միխիթարի, Մակարավանք այցելութեան ի պատիւ՝ նոյն բլուրի վրայ նրա կիսանդրիի կառուցն էր: Ամառային արձակուրդներին սանուհիները հանգստանում էին վանքի սենեակներում: Պատահում էր նաեւ, որ սաները ամառային հանդիպտը անցնէին վանքի զինարանի այդ բլուրի համեմատաբար հարթ տեղանքում բացուած մի քանի խոշոր վրաններում: Ամառը այնտեղ գով էր, չկար Մեղգոնեանի կաշկանդուածութիւնը, խիստ կարգապահութիւնը, համեմատաբար՝ «պատ» կարգավիճակ էր: Աուիթ էր, որ սան-սանուհիները իրարու հետ հաղորդ յարաբերութիւններ մշակէին: Սանուհիները, սենեակների պատահանների լայն բացուած փեղկերից փնտռում էին այն աչքերը, որոնցից ճառագած շանթերի լոյսից իրենց հոգիների տաճարներում սիրոյ պատարագ պիտի լինէր:

Բլուրին բացուած վրաններում սաների առօրեան տիտուր էր առանց սանուհիների, արգելուած էր գնալ վանք: Իրիկուններին գնում էին բլուրի բարձունք, որի ներքեւի ինքնաշարժի ճանապարհին, գոյգե-րով ու խմբերով, ետ ու առաջ

պտտում էին սանուհիները: Տղաները, թովիչ կանչերով փնտռում էին իրենց համակրած պարմանուհուն, որը իրենց սրտում սիրոյ թրթիռի կրակ էր վառել: Սէր էր երկնել մանչերի ու աղջիկների սրտերում, սիրոյ կրակի խարոյկների բոց, անգոր էին ծովերի ջրերը այն մարելու: Տղաներն էին երգում՝ «Կէս Գիշերուայ Սերէնատ» երգ, երգեր, աղջիկներն էին անուշ մեղեդիներ հնչում... երգի հանդէս, երգի հրավառութիւն էր Մակարավանքում, ձորակն էր աւելի բարձր ու անուշ հնչուն այն... սիրոյ խնթութիւնից ինչպէս պիտի քնանային այդ գիշեր... :

Ակուն Աղան, իմանալով, որ սաների մէջ նաեւ բնիկ Մուսա Լեւցի տղաներ կային, յաճախ էր նրանց իր շուրջը հաւաքում: Խնդրում էր պատմել, թէ ի՞նչ գիտէին իրենց մեծերի ու ծնողների դուշմանի դէմ մղած յաղթական կռիւների մասին: Խանդաղատանքով նայում բացուած խոշոր վրաններին, որոնք չորս երկար տարիներ ապաստանել էին դուշմանի դէմ կռուի ելած լեռնականներին: Աղա Կարապետ բարեւարն էր Եզրպատից այն փոխադրել զպրոց, ամառային արձակուրդներին սան-սանուհիներին ապաստանելու վանքի տարածքում կամ այլուր: Մուսա Լեւցի սաները կանչում էին, որ իրենց նախնիների ոգին է թեւածում այնտեղ, վառօդի ծուխ էլնում նրանց կազմածներից: Ակուն Աղան, մտատանջ նայուածքով պատմում էր Ջէյթունում մղուած քաջերի կռիւների մասին, ցաւից ճաքում էր դէմքը, մուսկուլում ակները, էէ, քաջի ակներից արցունք էր կաթում, հառաչում էր, որ անկուրի թողել էին իրենց շէները: Մենակութիւն է այստեղ, ասում էր: Պատմում էր, որ գիշերներին դուրս էր գալիս վանքի բացատ, «ՄԱՐԹԻՆ» երկարափող գէնքը դէպի աստղեր պարզած՝ կրակում... յանուն դուշմանի դէմ կռոււմ ընկած քաջերի հոգիների անմահութեանը... իրեն պատկերացնելով պաշտպանական դիրքե-

րում դուշմանի դէմ կռուին, նորէն կրակում ու աւելի բարձրաձայն կանչում՝ յանուն Ջէյթունի: Լոյսով շիկնում էին շրջապատի եղեւնիները... ձորն էր անդրադարձնում գէնքերի կանչերը, լոյսի շողերն էին գնում աստղերին համբոյր շաղելու:

Մակարավանքի աղբուրի սառնորակ, անուշահամ ջուրը բաւարարել էր միաբանութեան անդամների կարիքները: Այն բաւարար էր եղել նաեւ ամառային արձակուրդները անցնելու եկած Մեղգոնեան սաների կարիքներին: Իջնում էինք աղբուր, խոնարհում Նար Շովինարի յորդահոս ջրին, ափերով անյազ անուշ ջուր ըմպում, ափով ջուրը համով է, հաստատութեան տարածքի հորերից բխած աղի ջրի նման չէր: Մակայն, Մակարավանքում ինչպէս էին սաները ու սանուհիները լոզանք ընդունել:

Մեղգոնեանում, իւրաքանչիւր շաբաթ օր՝ մանչերի ու աղջիկների լոզանք ընդունելու օրն էր: Մեղգոնեանի բաղնիք, «արեւելեան բաղնիք», նրա կողքի կառուցում տաքացած ջուրն էր մղուած լոզանքի սրահ: Տղաներն էին խումբ-խումբ մտնում լոզարան, աղմկում, հրմշակում իրար, նատում գուռերի կողքին: Բարնիքն առանց աղմուկի՝ երբեք: Մորակներից տաք ջուրն էր քրքշալով լցում գուռեր: Սրահի գոլորշին էր իջնում նրանց իրաններին, լոյսի շինջ հատիկներ դարձած զլտորում ներքեւ: Պղնձեայ թասերով լիքը տաք ջուր, ցօղում էին մարմինները, օճառում գլուխները, փրփուրը ծածկում դէմքերը, Ներսէս աղբարի նման դառնում անճանաչելի, դիմացի ընկերն էր թատով ջուր լցնում գլխին, կատակով կանչում՝ «Օրդ՝ս այդ դո՛ւ ես...»:

Մեղգոնեանի ուսումնառութեան սկզբնական շրջաններին սան-սանուհիներ մեծամասնութիւնը յետ եղեւնի գաւազներ էին, ապաստան գտել արեւելքի հիւրընկալ երկրների ինքնաչէն թիթեղեայ

Շաբ.ը էջ 16

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

**ԸՆԿԵՆՆԱԿԱՆ ՇԱԲԱԹՈՒԵՑ ՎԱՐՄԱՐՍՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Որպիտութեամբ կը յայտնենք թէ միտքեանս Հայ Ընտանեկան ՁԻՒ Ծաքաթօրեայ վարժարանի դասերը կ'ընդունի մէջ պիտի վերսկսին Ծաքաթ. Մարտ 19-էն սկսեալ:

Արձանագրութիւններ տեղի կ'ունենան Յետեւեալ 3 օրերում.

- Ծաքաթ. Փետրուար 27
- Ծաքաթ. Մարտ 5
- Ծաքաթ. Մարտ 12, 2016, ստատուան ժամը 10-12

Հասցէն է Incarnation Community Center 214 West Fairview Avenue Glendale, CA 91202 (N. Central Ave.-ի և Glenside Blvd.-ի ձախողքը):

- Կ'ընդունենք 4-14 տարեկան փոքրիկներ
- Կը դասատուներին հայերէն լեզու, երգ, ամառնք եւ ազգային դաստիարակութիւն
- Դասի ժամերն են ստատուան 10-12

Սիրեցի հայրենակիցներ, Ձեր սիրտան գաւակներուն հայրիկ դաստիարակութիւնը փոստնից միտքեանս կ'ընդունի փոքրիկներն ու երեւոյ կ'ընդունի փոքրիկներն ու երեւոյ մը վարժարանին:

Մանրամասնութեան համար կ'ընդունենք:

**(562) 715-8730 • (818) 326-4725**

ՏԵՎՈՆՆԻՅԱՆ

## ՈՒՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԱՄԵՆԱՕԳՏԱԿԱՐ ԶԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բոլորին քաջ յայտնի է, որ կաթն կ'ամրացնէ ոսկորները, սոխը օգտակար է պաղաուութեան պարագային, իսկ ստեպտինը կը բարելաւէ տեսողութիւնը: Սակայն կը պարզուի, որ կարելի է զօրացնել ուսուցիչներու օգտակար յատկութիւնները եւ տարբեր հիւանդութիւններու դէմ անոնց պայքարելու կարողութիւնը, եթէ անոնք ձեռք համադրէ մէկը միւսին հետ: 12 ամենահօգոր համադրութիւնները՝

Ստեպտին+կոճապղպեղ+խնձոր. այս համադրութիւնը կը պահպանէ եւ կը զօրացնէ դիմադրողականութիւնը:

Խնձոր+վարունգ+սիւնեղ. կը կանխէ քաղցկեղը, կը նուազեցնէ քրոնիտները, կը վերացնէ ստամոքսի խանգարումը եւ գլխացաւը: Լոլիկ+ստեպտին+խնձոր. կը բարելաւէ մորթին գոյնը եւ կը վերացնէ սահմանէն բերանէն: Կծու պղպեղ+խնձոր+կաթ. կը կանխէ սահմանէն շաքարային բերանէն եւ կ'իջեցնէ ջերմութիւնը: Նարինջ+կոճապղպեղ+վարունգ. կը բարելաւէ մորթի գոյնը, կը խոնավեցնէ գայլն եւ կ'իջեցնէ ջերմութիւնը:

Անանաս+խնձոր+ամերուկ. կը հանէ աւելորդ աղերը, կը բարելաւէ միզարարի եւ երիկամներու աշխատանքը:

Խնձոր+վարունգ+քիվի. կը բարելաւէ մաշկին գոյնը եւ կը խոնավեցնէ գայլն:

Տանձ եւ պանան. կը կարգաւորէ շաքարի մակարդակը արեան մէջ:

Ստեպտին+խնձոր+տանձ+մանկո. կը բարձրացնէ մարմնի ներքին ջերմութիւնը, կը պայքարի թոյններու եւ մարմնի թթուայնութեան դէմ, կ'իջեցնէ արեան ճնշումը:

Խաղող+ամերուկ+կաթ. վիթամին C + վիթամին B2, որոնք կը մեծցնեն բջիջային աշխուժութիւնը եւ կը բարձրացնեն դիմադրողական համակարգը:

Փափառ+անանաս+կաթ. վիթամին C, E, երկաթ: կը բարելաւէ մորթի գոյնը եւ մարտողութիւնը:

Պանան+անանաս+կաթ. հարուստ է վիթամիններով եւ կը կանխէ փորկապուտութիւնը:

### ՉԿԱՆ ԻՒՂԸ՝ ԿՆՈՋ ԱՌՈՂՁՈՒԹԵԱՆ ՉԱՄԱՐ

Փոքր ժամանակ մեզ յաճախ կը ստիպէին խմել ձկան իւղ: Մենք ասիկա կ'ընէինք առանց հաճութիւն եւ չէինք գիտակցիր անոր դրական ազդեցութեան: Կը պարզուի, որ ձկան իւղը պէտք է օգտագործեն ոչ միայն փոքրիկները, այլ նաեւ՝ կիներ: Անիկա ունի շարք մը առանձնապատկանութիւններ, որոնք շատ օգտակար են կիներու համար:

Վիթամին A-ը, որով հարուստ է ձկան իւղը, կը բարելաւէ տեսողութիւնը: Բացի այդ, վիթամին A-ը կ'ամրացնէ երկար մազերը եւ եղունգները: Անիկա նաեւ կը զօրացնէ ակոսներու հմարը:

Ձկան իւղը ունի բնական ծագում՝ գայլն կը ստանան ձողաձկան լեարդէն: Անոր մէջ կան շատ հանքային նիւթեր եւ վիթամիններ: Ձկան իւղի ամենակարեւոր բաղադրիչը օմէկա-3 չլիպեցած

ճարպթթուներն են: Ասոնք են ձկան իւղի համատարած օգտագործման պատճառները:

Օմէկա-3-ը ունի հակաօքսիտային ազդեցութիւն, որ կը դանդաղեցնէ մարմնի ծերացման գործընթացը: Մարմինը աւելի դանդաղ կը ծերանայ, մաշկը կը մնայ առաձգական եւ ձիգ, իսկ կանացի գեղեցկութիւնը կը պահպանէ բնական տեսքը: Անիկա դրականօրէն կ'ազդէ կիներու արտադրողական համակարգին վրայ եւ չղիութեան ընթացքին կը կարգաւորէ արգանդի վիճակը:

Ձկան իւղի մէջ պարունակուող D վիթամինը շատ օգտակար է չղի կիներու համար, երբ անոնց մօտ կը զգացուի քալիսիումի պակաս: Այս վիթամինը կ'օգնէ քալիսիումի ներծծման աղիքներուն մէջ եւ կը նուազեցնէ անոր դուրսբերումը մեզի միջոցով:

## ԸՆԴՈՒՆԵՑՔ ՍԵՓԱԿԱՆ ՍԻԱԼՆԵՐԸ

Երբ կը խօսինք մարդու անձնական աճի, ինքնագարգացման եւ յաջողութեան հասնելու մասին, մենք կը փորձենք առաջին հերթին շեշտը դնել ոչ թէ մարդու գիտելիքներուն, այլ անոր սովորութիւններուն եւ բնավարութեան վրայ: Մարդու սովորութիւնները կը ձեւաւորեն անոր բնավարութիւնը, իսկ մարդու բնավարութիւնէն կարծաւ է անոր յետագայ ամբողջ կեանքը: Եթէ կ'ուզէք ձեր կեանքին մէջ որեւէ բան փոխել, ուրեմն առաջին հերթին փոխեցէք ձեր բնավարութիւնն ու սովորութիւնները:

Մենք բոլորս ալ ժամանակ առ ժամանակ կը սխալինք: Ոչ ոք կատարել է եւ ուզենք, թէ չուզենք, որեւէ պահ մենք կրնանք սխալիլ՝ որեւէ բան այնպէս չենք ընէր կամ ըսէր եւ որոշ ժամանակ անց անոր համար կը զղջանք: Իսկ թէ այնուհետեւ ինչպէս կը պահենք մենք մեզ, կը տեսնենք հիմա:

Ընդհանրապէս, շատերու մօտ կարծիք կայ, որ իմաստուն մարդը պէտք է երբեք չսխալի կամ սխալելու պարագային՝ պէտք է իր սխալները երբեք ցոյց չտայ: Բայց իրականութեան մէջ սխալները թաքցնելու, անոնցմէ խուսափելու եւ ընդունիլ չկարենալու մէջ չէ մարդու իմաստութիւնը, այլ հա-

կառակը՝ սեփական սխալները ընդունելու եւ անհրաժեշտ պարագային ներողութիւն խնդրելու: Պէտք է գալ հոգեկան եւ մտաւոր այնպիսի վիճակի, որ առանց լրացուցիչ ջանքերու ի վիճակի ըլլանք գիտակցիլ սեփական սխալները: Ընդհանրապէս, մարդը ունի ինքնապաշտպանական բնագոյն եւ այն բացասականը, որ առնչուած է իրեն, ան կ'ընդունի շատ դժուար: Պէտք է կարենալ յաղթահարել գայլը: Եթէ որեւէ սխալ կ'ընէք, առանց վարանելու ընդունեցէք գայլը: Եթէ որեւէ մէկը վիրաւորած էք կամ վնասած, գիտակցեցէք, որ վատ բան ըրած էք, ընդունեցէք գայլն եւ ներողութիւն խնդրեցէք: Մի լռէք եւ մոռացութեան մատնէք, այլ ուղղակի խոստովանեցէք: Անկէ ետք դուք ձեզ շատ աւելի հանգիստ, մաքուր ու վստահ պիտի զգաք: Դիմացիներ նոյնպէս աւելի պիտի գնահատէ ստիկա եւ ձեզի աւելի յարգանքով պիտի մօտենայ, քան եթէ դուք ոչինչ ընէիք: Մի ամչնաք սխալներ թող տալէ, ամչնէք գանոնք ընդունիլ չկարենալէն: Երբ դուք ձեռք բերէք սխալները ընդունելու այդ սովորութիւնը, դուք քայլ մը եւս կ'աճիք ինքնազարգացման եւ յաջողութեան հասնելու ձեր ճանապարհին:

### ՄԻ ՊԱՏԱՌԻԿ ԵՄ

Շարունակուած էջ 15-էն

խրճիթներում: Անձրեւների կաթիլները գարկում էին նրանց թիթեղեայ տանիքներին, մահուան ճամբաներով անցած մարդկանց հոգիներին՝ նոր կեանքի յորդորի կանչեր հնչում: Երեւի շատ-շատ մանչեր, մտքով թռչում իրենց խրճիթներ, տաշտերի մէջ կանգնած, ինչպէս էին իրենց մայրերը, գորովալիլ լողացնում իրենց: Յիշում էին, չիշում եմ նաեւ, որ օտարը, առանց կռուի ինչպէս քանդեց Մուսա Լեռը... չթողեցին հրդեհէին իրենց տները, որ դուռմանի ծնունդ չլինէր այնտեղ:

Սանուհիները, առանձին խմբերով գալիս բաղնիք, ոչ մի խօսակցութիւն տղաների հետ, գաղտագողի ժպտում, ահ այդ լուստոս ժպտները՝ իրենց սիրոյ տաճարների կանթեղների կրակալոյսն էր, խեղճանալիք էր...: Ձոյգ ձեռքերը խաչածեւած լանջերին, մտնում բաղնիքի լողարան, տաք ջրի շոգին գրկում փթիթ իրանները, հուրի-փերիների ճախրանքի նման գնում գուռեր: Ծոզին հալուել էր, ափերով հաւաքում էին նրա հատիկները, որ "Աննա"-յի նման այն մատուցէին իրենց "արքայ"-ին: Թասերով ջուր, ջուր էին լցնում իրենց մարմիններին, այն օծելու իրենց սիրուհի՝ Նար Ծովինար աստուածուհու օրհնութեամբ: Հայոց երգերն էին թեւածում լողարանում, Լոռուայ սարերի "Համբարձում Եւլայի" երգեր, Անուշ-ի "Ջան Գիւլում"-ի երգեր: Ձուրն էր սրբացրել նրանց իրանները, խմբում էին լողարանի կեղերոնում, սքանչանում իրարու տեսքով, տաք ջուրը շիկնել էր իրենց, դէմքերն էին վարդացել, ծաղկել՝ փրփրոնի ծաղիկի ու ձնծաղիկների նման:

Սակայն, Մակարաբանքում ու վրանային համալիրում՝ բաղնիք, տաք ջուր ո՞րտեղից: Նրա տարածքի ոչ բանուկ արահետին մօտիկ, ժայռի տակից ջուր էր յորդում, խողովակ էին յարմարացրել, մատնաչափ հոսում էր: Սաները քարե-

րով օճախ էին պատրաստել, վրան մետաղեայ խոշոր տակաո գետեղել, աղբուրակից ջուր լցրել: Ձուրը տաքացնելու համար, օճախում կրակ էին վառել: Եղեւնիների հովանիի տակ, բացօթեայ բաղնիք էր: Ամուր տղաներ, արեւի ճառագայթներին թիկնած՝ ջուր ցանում իրաններին, ցօղում մարմինները, ցամքելու համար արեւի շուրջ բոլորն էին պտուտկում, իրենց ստուերները դիտում եղեւնիների հովանիի տակ, վիճում ու ստուերն էր աւելի թիկնեղ:

Սանուհիներն էին առանձին խմբերով գնում նոյն բացօթեայ բաղնիք: Հսկողութիւն էին սահմանել արահետի երկու կողմերին: Դիմացը ծովն էր, ցամաքին աւելի շուտ հպելու համար ալիքները գարկում էին իրար, սպիտակում: Արեւի ճառագայթները լոյսի խաբոյկ էին վառել նրանց իրաններին, երազկոտ նայել հեռուներ, փնտռելու իրենց սիրեցեակների հրավառակների լոյսի կրակը: Սիրոյ տենչը, մարդ արարածի եղափոխութեան կատարելութիւնն է, եղափոխութիւն, որից հրաշք բնութեան «մարդ» արարողը արարուցեց: «Հուրիները կը լողանան», կանգնել էին յոյն քանդակող Ծիտիասի մարմարէ արձանների հանգոյն, թասերով ջուր լցրել իրարու իրաններին: Ուսերնին, լանջերնին իջած փրփրալից վարսերնին սանտուրում, իրենցից մէկը կանչել էր, յանկարծ մի տղայ գաղտուկ չի տեսնում իրենց, հէքիաթի նման՝ սանտուր մագերին հոպոպ թռչում կը դառնային: Լոյսի աղուր շողերի ստուերներում՝ իրենց իրաններն էին Աթենաս Պալլասի, թէ՞ Աստղիկի նման արձանացել: Ծովի ջրերին թիկնած ջրահարսերը անհացած դիտում նրանց, ալիքների ձերմակ ջրերին ելած ողջոյն յղում: Իրենք, ցեղի հարսերը պիտի լինէին, դուրմանից վրէժ լուծելու համար բազում մանչեր պիտի արարէին: Երգով, տաղով՝ արեւի լոյսի շուրջ նազով պարեր էին բռնել: Հէքիաթ, ո՞չ, նրանք Արմին-հայերի հրաշք հուրիներն էին:

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:----- Email: -----



### «ԲՈՐՈՒՄԻԱՆ» ՈՒ «ԲԱՒԱՐԻԱՆ» ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ ԲԱԺԱՆՈՒԵՑԻՆ ԴՈՐՏՄՈՒՆԴՈՒՄ



Գերմանական Բունդեսլիգայի 25-րդ տուրի կենտրոնական խաղը կայացավ Դորտմունդում, որտեղ երկրորդ տեղում գտնուող «Բորուսիան» ընդունեց 5 միաբանող ատակուղիներ ունեցող առաջատար Մյունխենի «Բավարիային»:

Խաղի սկզբնամասն անցնում էր հաշտար պայքարում ու փոխնիփոխ գրոհներով: Թիմերը խաղադաշտում պայքարում էին, թէ ով պետք է վերահսկի գնդակը, բայց կոլային պահեր գրեթե չկային: Առաջին իրական կոլային պահը եղավ 27-րդ րոպեին, երբ «Բավարիայի» պրագիլացի կիսապաշտպան Դուգլաս Կոստան մէն-մենակ դուրս եկավ տանտէրերի դարպասապահի դէմ եւ չկարողացավ գրավել դարպասը:

Առաջին խաղակէսի վերջնամասում միւնխենցիների ատակուղիները նկատելի էր դարձել: 5 պաշտպաններով խաղացող «Բորուսիան» գործում էր երկրորդ համարով ու հակագրոհներով, իսկ «Բավարիան» ստեղծեց մի քանի վտանգաւոր պահեր, որոնք օգտագործել չչաջողուեց:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Բորուսիայի» մեկնարկային կազմում էր եւ բաւական ակտիւ էր առաջին խաղակէսում: Երկրորդ խաղակէսի սկզբնամասում դաշտի տէրերից կոլային պահ կորցրեց ճաբոնացի յարձակուող Պիեր-Էմերիկ Օբամէնգանգը, ինչին «Բավարիան» պատասխանեց մի քանի վտանգաւոր գրոհներով: «Բորուսիան» գնդակը չանձնել էր մրցակցին, բայց չէր մոռանում նաեւ գրոհելու մասին: Հիւրերը, չնայած բազմաթիւ գրոհներին, միայն մէկ անգամ լուրջ անհանգստացրին Ռոման Բիւրկիին, որի հրաշալի սէյվից յետոյ գնդակը յետ մղուեց դարպասաձողից: Գրանցուեց 0:0 հաշիւը: Արդիւնք, որը ձեռնտու էր Խոսէպ Գուարդիոլայի թիմին: Հենրիխ Մխիթարեանը խաղաց առանց փոխարինման:

«Բավարիան» պահպանում է 5 միաբանող ատակուղիները դորտմունդցիների նկատմամբ: Թոմաս Տուխելի թիմն էլ իր հերթին 16 միաբանող է անցել լաւագոյն եռեակը եզրափակող Պեուլինի «Հերտայից»:

### ԱՆԳԼԻԱՅԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԱՎՈՒՄԲԵՐԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳԱՐՏՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԼԻԱՐԴԱՏԻՐՈՋ ՀԵՏ

Լոնտոնի Dorchester Hotel հիւրանոցում գաղտնի հանդիպում է տեղի ունեցել ամերիկացի միլիարդատէր Ստիվըն Ռոսի եւ Պրեմիեր լիգայի 5 ամենահարուստ ակումբների ղեկավարների միջեւ, հաղորդում է The Sun-ը:



Հանդիպմանը ներկայ են եղել՝ «Մանչեսթեր Շտայթըդի» փոխնախագահ Էդ Վուլֆորդը, «Չելսիի» նախագահ Բրիւս Բակը, «Արսենալի» գործադիր տնօրէն Իվան Գազիդիսը, «Մանչեսթեր Սիթիի» գործադիր տնօրէն Ֆերան Սորիանոն եւ «Լիվերպուլի» կառավարող տնօրէն Յան Էյրը:

Ամերիկեան «Մայամի Դոլֆինս» ակումբի ղեկավար Ստիվըն Ռոսն անգլիական ակումբների ղեկավարներին առաջարկել է հրաժարուել Ախոյեանների լիգայի մասնակցութիւնից եւ ստեղծել Եւրոպական էլիտար Սուպերլիգա: Ամերիկացին յայտնել է, որ Եւրոպայի ուժեղագոյն ակումբների համար նախատեսուած լիգայում ընդգրկուելը կախուած չի լինի թիմերի գրանցած ցուցանիշներից: Այդ կերպ ակումբներին չի սպառնալ եւրագաւաթներից դուրս մնալու ու մեծ գումարներից զրկուելու վտանգ:

Լրագրողներն ակումբների ղեկավարներին նկատել են հիւրանոցից դուրս գալիս, երբ նրանք ունեցել են բարձր տրամադրութիւն:

### ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ՌԻՕ-2016-ԻՆ



Պրոֆեսիոնալ բոնցքամարտիկները իրաւունք կ'ունենան մասնակցել 2016թ. Ռիոյի Օլիմպիական խաղերին, յայտարարել է Սիւրողական բոնցքամարտի միջազգային ֆեդերացիայի (ԱԻԲԱ) նախագահ Չինգ-Կուո Վուն:

«Յունիսին ԱԻԲԱ-ի կանոնադրութիւնում կը կատարուեն փոփոխութիւններ, պրոֆեսիոնալները կը ստանան Օլիմպիական խաղերում հանդէս գալու հնարաւորութիւն: Նրանց ոչ մի առաւելութիւն չի տրուի ընտրական փուլերում: Մենք պէտք է փոխենք այս վիճակը, այսպէս չի կարելի, բոնցքամարտը միակ մարզաձեւն է, որի պրոֆեսիոնալ ներկայացուցիչները չունեն օլիմպիական դառնալու հնարաւորութիւն», - ԱԻԲԱ-ի նախագահի խօսքը մէջբերում է Reuters-ը:

Հռչակաւոր ֆիլիպինցի Մենի Պակյոն (57-6-2, 38 նոկաուտ) ցանկութիւն էր յայտնել դուրս գալ Ռիոյի օլիմպիական ուինգ՝ յետաձգելով մարզական կարերայի աւարտը: Աւելի վաղ նա յայտարարել էր, որ Ապրիլի 9-ին Լաս Վեգասում ամերիկացի Թիմոթի Բրեդլիի հետ մենամարտը կը լինի վերջինն իր մարզական կարիերայում:

Պրոֆեսիոնալ բոնցքամարտի ազդեցիկ կազմակերպութիւններից (Բոնցքամարտի համաշխարհային խորհուրդ, WBC) մէկի նախագահ Մաուրիսիո Սուլէյմանն արդէն քննադատել է Պակեայի յայտարարութիւնը:

«Միծաղելի է Պակեայի ցանկութիւնը: Հաւանաբար, ԱԻԲԱ-ի նախագահը նրան վճարել է այդ յայտարարութեան համար»:

### ՀԱՅ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՄԵՎՆՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՔԻ

Բոնցքամարտի Հայաստանի հաւաքականը Մարտի 9-20-ը հաւաքականի գլխաւոր մարզիչ Կարէն Աղամալեանի գլխաւորութեամբ ուսումնամարզական հաւաք կ'անցկացնի Ծաղկաձորում: Հաւաքին կը մասնակցեն 29 մարզիկ (4 աղջիկ): Այս մասին հաղորդում է Հայաստանի բոնցքամարտի ֆեդերացիայի մամուլի ծառայութիւնը:

Գլխաւոր մարզիչին կ'օգնեն աւագ մարզիչ Արման Յարութիւնեանն ու աղջիկների հաւաքականի գլխաւոր մարզիչ Յարութիւն Նազարեանը: Յիշեցնենք, որ Ապրիլի 7-ին Թուրքիայի Սամսուն քաղաքում կը մեկնարկի բոնցքամարտի Եւրոպայի առաջնութիւնը, որը վարկանիշային է օլիմպիական խաղերի համար:

### ԸՍԲՇԱՄԱՐՏ: ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆՆ ՈՒՆԻ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՎԱՐԿԱՆԻՇԸ

Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիան ներկայացրել է մարզիկների թարմացրած վարկանիշները: Աշխարհի կոկնակի ախոյեան Արթուր Ալեքսանեանը գլխաւորում է 98 կգ քաշայինների աղիւսակը:



Պաքուում կայացած Եւրոպական խաղերի փոխախոյեան Միհրան Յարութիւնեանը չորրորդն է 66 կգ քաշային կարգում, իսկ Ռաֆիկ Մանուկեանը 17-րդ տեղում է յայտնուել 80 կգ քաշայինների ցուցակում:

Օլիմպիական խաղերի արծաթէ մետալակիր Արսէն Զուլֆալակեանը 9-րդն է 75 կգ քաշային կարգում, իսկ Կարապետ Չալեանը՝ 13-րդը:

Ուքրաինան ներկայացնող Արմէն Վարդանեանը 71 կգ քաշայինների ցուցակում գեղեցնում է երկրորդ տեղը, իսկ Պրագիլայի դրոշի ներքոյ հանդէս եկող Էդուարդ Սողոմոնեանը 9-րդն է գերման քաշայինների պայքարում:

### ՌՈՆԱԼԴՈՒՆ՝ ՍՊԱՆԻԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԼԱՒԱԳՈՅՆ ՌՄԲԱՐԿՈՒ

Մադրիդի «Ռեալի» պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն, Պրիմերայի 28-րդ տուրում 26 րոպէսում 4 գնդակ ուղարկելով Վիգոյի «Սելտայի» դարպասը, Սպանիայի առաջնութեան պատմութեան լաւագոյն ուժարկուների ցուցակում բարձրացել է երկրորդ տեղ, գրում է Daily Mail-ը:



Պորտուգալիայի հաւաքականի աւագը կոլերի քանակը հասցրել է 252-ի եւ շրջանցել Բիլբաոյի «Աթլետիկի» լեգենդար յարձակուող Տելմո Սարային, որը Սպանիայի առաջնութիւնում խփել է 251 կոլ:

Այդ ցուցանիշով Ռոնալդուն գերազանցում է միայն «Բարսելոնայի» արժեքնաւոր յարձակուող Լիոնել Մեսին, որը Պրիմերայում դարձել է 305 կոլի հեղինակ: 252 կոլ խփելու համար 31-ամեայ պորտուգալացուց պահանջուեց 228 հանդիպում:

### ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** **Մարտ 21-Ապրիլ 19**  
 Համբերութեամբ կը սպասես սիրելիի մը ժամանելուն, եւ սակայն միեւնոյն ատեն ջղային դարձած ես: Ժպիտը կեանքիդ ծառայութեան մէկ կարելոր մասը ընելու ես: Հոգեկան իրավիճակդ կը կարօտի սփոփանքի եւ գուրգուրանքի: Փորձարու անձի մը դիմէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 2,9,18,22,33

**ՑՈՒԼ** **Ապրիլ 20-Մայիս 20**  
 Մի կարծեր որ ժամանակդ կը վատնես երբ կը հանգչիս, այլ կարելորութիւն տուր ֆիզիքական առողջութեանդ: Ծրագիրներդ կրնան շատ նպատակներու ծառայել երբ դասաւորես զանոնք իմաստութեամբ: Անսահման երջանկութիւն կը սպասէ քեզ շաբաթավերջին:  
 Բախտաւոր թիւերդ են: 15,18,24,26,31

**ԵՐԿՈՒՐՆԵԱԿ** **Մայիս 21-Յունիս 20**  
 Ըրած աշխատանքիդ արդիւնքը անմիջապէս չ'ստանալով՝ մի յուսայատիր եւ տխրութեան տեղի մի տար: Զծանօթացած մէկ ազգականդ կը փնտռես որը հեռաւոր երկրի մը մէջ կ'ապրի: Սիրայօժար եւ ժպտալով կատարէ պարտականութիւններդ ընտանիքիդ նկատմամբ:  
 Բախտաւոր թիւերդ են: 9,17,23,25,32

**ԽԵՑԳԵՏԻՆ** **Յունիս 21-Յուլիս 22**  
 Ուրիշներու մասին տեղեկութիւններ քաղելով ժամավաճառութիւն կ'ընես, դուն քեզ ծանր բռնէ: Խօսքերդ լաւ հաւասարակշռէ որպէսզի ամօթով չ'մնաս: Ժողովի մը ներկայ պիտի ըլլաս եւ դժուար պաշտօն մը պիտի ստանձնես: Սպառնալիքներէն մի վախճար:  
 Բախտաւոր թիւերդ են: 4,15,23,27,35

**ԱՌԻԻԾ** **Յուլիս 23-Օգոստոս 22**  
 Մօտ բարեկամիդ օգնէ անոր դժուարին օրերուն մէջ: Նկարագրիդ լաւագոյն յատկանիշը, խոնարհութեան վերաբերմունքդ է: Պետութեան կողմէ դրկուած ծրար մը պիտի ստանաս եւ շատ պիտի զարմանաս: Մարդոց ուշադրութիւնը վրադ դարձնելով՝ կ'ուրախանաս:  
 Բախտաւոր թիւերդ են: 18,21,25,30,31

**ԿՈՅՍ** **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**  
 Բնաւ նախանձի արտայայտութիւն չես ցուցաբերէր բարեկամներուդ յաջողութիւններուն ընթացքին, այլ ընդհակառակը՝ իրենց հետ կ'ուրախանաս: Պարտականութիւններուդ մէջ երբէք չես թերաճար: Դժուար կացութեան մը մէջ պիտի գտնուիս եւ քիչ մը պիտի յոգնիս:  
 Բախտաւոր թիւերդ են: 10,16,22,28,34

**ԿՇԻՈՔ** **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**  
 Գործիդ եկամուտը բաւական լաւ ըլլալով հանդերձ՝ կը ցանկաս աւելի ապահովութիւն ունենալ: Անկարելիութիւնները քեզ չեն վախցներ, որովհետեւ հետեւող եւ հետապնդող ես: Շատ տպաւորիչ նկարագիր մը ունիս եւ շուքդ շատ ծանր է ընտանիքիդ անդամներուն քով:  
 Բախտաւոր թիւերդ են: 7,12,26,27,34

**ԿԱՐԻՃ** **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**  
 Գամբռողութեան մը ընթացքին՝ ինքնաշարժի փոքր դժուարութիւն մը քեզ պիտի ուշացնէ: Նիւթապէս կարող ես տուն մը գնելու՝ սակայն փոփոխութիւն չես սիրեր: Զաւակներուդ հարցերը համբերութեամբ դիմագրաւէ եւ մի վարանիր զանոնք խրատելու:  
 Բախտաւոր թիւերդ են: 11,18,24,28,35

**ԱՂԵՂՆԱԻՈՐ** **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**  
 Աշխարհիկ եւ բողոքային արժեքներով լեցուած ընկերութիւններէ կը խուսափիս: Հակառակորդներուդ դէմ թշնամական վերաբերմունք մի ունենար: Արդար դատողութիւն ունենալով՝ մարդիք յաճախ քովդ կուգան իրենց հարցերը լուծելու:  
 Բախտաւոր թիւերդ են: 4,13,24,28,34

**ԱՅԾԵՂՋԻՐ** **Դեկտեմբեր 22-Յունուար 19**  
 Զաւակներուդ տուած խրատներդ բնաւ աննկատ չեն մնար, անպայման կը լսուին եւ կը յիշուին: Այդպիսի յատուկ ձեւ մը ունիս ապրելու, որ կը զմայլեցնէ բոլորը եւ շատեր կը փափաքին քեզի նմանիլ: Դիտումնաւոր կերպով զրպարտութիւններ մի ըներ որպէսզի չզղչաս:  
 Բախտաւոր թիւերդ են: 1,11,27,34,35

**ԾՈՎԱՆՈՅՑ** **Յունուար 20-Փետրուար 18**  
 Ապագայիդ նայելով պէտք է յուսադրուիս եւ ուրախ ըլլաս: Քեզմէ խնդրուածները չես մերժեր: Կեանքդ յարատելելու շատ ընտրութիւններ ունիս, սակայն կ'ընտրես պարզը եւ խոնարհը, որովհետեւ ընտրութիւններդ շիտակ կատարելու լաւ հասկացողութիւն եւ համոզում ունիս:  
 Բախտաւոր թիւերդ են: 13,17,23,26,31

**ՉՈՒԿ** **Փետրուար 19-Մարտ 20**  
 Եռանդուն եւ զօրաւոր անձ մըն ես, շարունակէ գործնալ: Բարին չարէն զանազանելու բացառիկ կարողութիւն ունիս, օգտագործէ զայն առօրեայ կեանքիդ մէջ: Դուն քեզ յարմարցնելու ես շրջանակիդ որպէսզի օտար չ'զգաս եւ մասնակից ըլլաս հաւաքներուն:  
 Բախտաւոր թիւերդ են: 7,15,24,31,35

### ՄԱՅԱԶԴ



**ՄԿՐՏԻԶ (ՄԿՕ) ՄԵԼԵՄԹՃԵԱՆ (1945-2016)**

*Խոր ցաւով կը յայտնենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝ ՄԿՐՏԻԶ (ՄԿՕ) ՄԵԼԵՄԹՃԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Մարտ 1, 2016ին, յետ երկարատեւ հիւանդութեան: Եկեղեցու արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, Մարտ 12ին, առաւօտեան ժամը 11:00ին Հովիվուտի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցու մէջ՝ 1201 North Vine Street, Los Angeles, CA 90038:*

- Սգակիրներ՝*  
 Այրին՝ Թերեզա Մելեմթճեան  
 Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Ծովինար Տէմիրճեան եւ զաւակները  
 Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Մանուէլա Մելեմթճեան եւ զաւակները  
 Քոյրը՝ Սիլվա Մելեմթճեան  
 Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Գուրգէն եւ Ազնիւ Սարգիսեան եւ զաւակները  
 Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Զարեհ եւ Աննա Մելեմթճեան եւ զաւակները  
 Հօրեղբոր որդին՝ Տէր եւ Տիկ. Վահան Մելեմթճեան եւ զաւակը  
 Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սիլվա Օտապաշեան եւ զաւակները  
 Տէր եւ Տիկ. Պետիկ եւ Անի Օտապաշեան եւ զաւակները  
 Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Գոճապապեան եւ զաւակները  
 Տէր եւ Տիկ. Աւօ եւ Արմիկ Մակարեան եւ զաւակները  
 Տէր եւ Տիկ. Մարտիկ եւ Նորա Պուլտուքեան եւ զաւակները  
 եւ համայն Օտապաշեան, Տէմիրճեան, Պէնալիտէս, Մակարեան, Նիկողոսեան, Գոճապապեան, Քէօշկերեան, Սաղրեան, Պուլտուքեան եւ Բալայեան ընտանիքները եւ հարազատները:

### 2016-ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ

**Շարունակուած էջ 14-էն**

*անհրաժեշտութիւն եւ անսակարկելի արարք» (Արամ Ա. կաթողիկոս), նաեւ անհրաժեշտ է, որ դառնայ դաստիարակութիւն եւ զգաստութեան հրաւիրող իրականութիւն: Դաստիարակութիւն մը, որ կրնայ կոփել մեր կեանքերը զգաստութեամբ: Պրուկման այսպէս կը բացատրէ. «Եթէ այս Աստուծոյ աշխարհն է, եւ սէրը՝ անոր մղիչ ուժը, ուրեմն մեր իւրաքանչիւրին պարտականութիւնը ապահով կեանքեր ապրիլ է, այլ ձերբազատիլ վախէն եւ մխրճուիլ կեանքի մէջ եւ գործնական ու շօշափելի արարքներ գործադրել»:*

*Մեր աշխատանքները եւ գործառնութիւնները պէտք է ստեղծեն ծառայութեան կեանք մը՝ բարիին պատկերով, որ կը փոխէ անհատը, բայց նաեւ՝ հաւաքականութիւնը եւ անոր պատմութիւնը:*

*Ծառայութեան տարի: Փոխող ու փոխուող եւ, տակաւին, նորոգուող ու նորոգող իրականութիւն: Եւ որպէս հայ քրիստոնեայ՝ արժէ կառչիլ անոր:*

**OFFICE SPACE FOR RENT IN PASADENA**

**ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

**1060 North Allen Ave Pasadena, CA 91104**

**Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով**

**Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506**

**ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**

*«Մասիս»ի հաւատաւոր ընթերցողներէն մի ոմն գնահատելով թերթի բովանդակութիւնն ու ուղղութիւնը, \$100 տուար կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:*

**ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒՎԱԿԱՆ ՍԱՅԱԿԵԱՆԻ ՕՐ Մայիս 15, 2016**



# ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՆՐԱԲԱԽԱՔ

## ԹՐՔԱԿԱՆ ԲԻՊԱՏՈՍԱՐԱՆ

6300 Wilshire Blvd., Los Angeles / Crescent Heights

### ԿԻՐԱԿԻ, 24 ԱՊՐԻԼ, ԺԱՄԸ 1-ԻՆ



ՀԱՆՐԱԿԱՌՈՎ  
ՓՈՒՍԱԳՐԱՄԻՋՈՑ՝  
ԿԷՍՕՐՈՒԱՆ ԺԱՄԸ 12ԻՆ

ՄԵԿՆՈՒՄԻ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԱՅՐԵՐ

- |           |             |              |
|-----------|-------------|--------------|
| ԿԼԵՆՏԷՅԼ  | ՎԵՆ ԿԱՅՍ    | ՆՈՐԹ ՀԻԼՁ    |
| ՍԱՆԹԱ ԱՆԱ | ԹԱՀԱՆԿԱ     | ՊԸՐՊԵՆԻ      |
| ՓԱՍԱՏԻՆԱ  | ԷՆՍԻՆՕ      | ՆՈՐԹ ՀՈՒՎՈՒՏ |
| ՄՈՆԹԵՊԵԼԸ | ՔԱՆՈԿԱ ՓԱՐԻ | ՀՈՒՎՈՒՏ      |

## WWW.RALLYFORJUSTICE.ORG | 1(877)477-2559

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ

Հիմնադրվել է Ամերիկայի Հայ Կոնգրեսի Եկեղեցուց Արևմտյան ՔՆՎ, Ամերիկայի Միացյալ Նահանգներու Հայ Կոնգրեսի Եկեղեցուց Արևմտյան ՔՆՎ, Հիսթորիկ Ամերիկայի Հայ Կոնգրեսի Եկեղեցուց, Հիսթորիկ Ամերիկայի Հայ Անկախության Միություն, Ժամերայի Ազատության Կոնգրես ՔՆՎ, Հայ Յեզուիտների Դպրոցներին, Օսթոնի Դեմոկրատիկ Ներքին Կոնգրես ՔՆՎ, Հայ Բարեգործության Շեյխուհու Միությունից Նահանգներու Արևմտյան Երրան, Հայ Օրկեստրան Միությունից Միացյալ Նահանգներու Արևմտյան Երրան, Հայ Երիտասարդացի Դպրոցներին, Ամերիկայի Հայկական Համագործակցության Կենտրոնը, Արևմտյան Ամերիկայի Հայ Դատի Թանկախոսը, Ամերիկայի Հայկական Խորհուրդը, Հայկական Իրավունք Կոնգրեսը, Հայկական Իրավունքների Միությունը, Կոնգրեսի Միությունը